

Վերլուծումի եւ գնահատանքի փորձ Հայաստանի երիտասարդական բանաստեղծութեան մասին

ՊԵՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

ՄՈՒՏՔ

«Երիտասարդական բանաստեղծութիւն» բնորոշումը կը պատկանի հայաստանցիներուն: Այսպէս կոչեցին վերջին տասնամեակին բանաստեղծութեան ասպարէզ իջած երիտասարդ բանաստեղծներու սերունդը, որոնք իրենց ձեւի եւ խորքի իւրայատկութիւններով ուշադրութիւն դրաւեցին եւ խօսիլ տուին իրենց մասին: Հետեւաբար, երիտասարդ բնորոշումը չի վերաբերիր տարիքին այնքան՝ որքան իրենց բանաստեղծութիւններու ձեւէն ու խորքէն թելադրուող թարմութեան, նորարութեան, ժամանակակից ըլլալու ձրդտումին:

Երիտասարդական բանաստեղծութեան ներկայացուցիչներէն օժտուածներն ու տաղանդաւորները մասնաւորաբար, հետամուտ են լեզուա-ոճային ու արտայայտչական նոր ձեւերու յանդուգն որոնումներուն: Չեն սիրեր, արդէն փորձուած հին արահետներէ քայլել: Առանց ամբողջական խզումի մեր գրականութեան մայր երակէն՝ կը փորձեն հրաժարիլ դասական կաղապարուած եւ «չարուն» դարձած կերպերէ:

Հայաստանի երիտասարդ բանաստեղծներու նորարութիւնը չի յատկանշուիր միայն ձեւի փնտռութիւններով: Իրենց մօտ ցայտուն երեւոյթ է նաեւ նոր աշխարհագրացողութիւնը, որ հիմնովին կը

տարբերի հիւնքերու աշխարհընկալումէն: Ասով կը բացատրուի երիտասարդներու եւ երէցներու հակասութիւնը, հակամարտութիւնը եւ երբեմն բուռն բանավէճերն ու սուր պայքարները: Եւ զարմանալի ու տարօրինակ չէ այս երեւոյթը: Բոլոր ժողովուրդներու գրականութեան մէջ նորի եւ հինի պայքարը անխուսափելի իրականութիւն մըն է: Անուրանալի է նաեւ այն իրողութիւնը թէ երիտասարդութեան մշակած ու ստեղծած գրականութիւնը, եթէ տաղանդի ներքին ուժով եւ լոյսով պայմանաւորուած է ան կը բարձրացնէ նոր եւ մնայուն յարկ մը գրականութեան բազմադարեան շէնքին վրայ: Այս ուղիով է որ կը զարգանայ ու կը յառաջդիմէ ժողովուրդի մը ազգային գրականութիւնը: Ու Հայաստանի երիտասարդ բանաստեղծները այս առաքելութեան եւ կոչումին գիտակցութեամբ զինուած կը ստեղծագործեն: Ստեղծագործական կիրքը, խռովքը, հաւատքը կը զդացնեն իրենց բանաստեղծութիւններուն եւ բանաձեւած բանաստեղծութեան ըմբռնումներուն մէջ: Եթէ նոյնիսկ ըստեղծագործական որոնումներու ճանապարհին իյնան ծայրայեղ ձեւապաշտական փակուղիներու մէջ եւ հանդիպին խռութեան, վանոնք պէտք է նկատել ժամանակաւոր եւ անցաւոր երեւոյթ: Արդար պիտի չըլլար, անոնցմով միայն դատել ու գնահատել երիտասարդական բանաստեղծութեան լինելութեան մէջ եղող կարելիութեան եւ արժէքը: Յայտնենք նաեւ որ ըսելիք չունեցող «նոր արարներ», որոնք իրենց խորքի դատարկութիւնը կը քողածածկեն ձեւի անհաղորդ եւ անյարիր բառախաղութեամբ եւ ածպարարութեամբ, վրիպած կրնան ըլլալ երիտասարդական բանաստեղծութեան շարքերուն մէջ: Մոլորանք ու վրիպանք է անոնցը, որը չի կրնար մեկնակէտ եւ դատումի չափանիշ ծառայել երիտասարդական բանաստեղծութեան գնահատումին:

Մեր վերլուծումի եւ գնահատութեան այս փորձին, ուսումնասիրութեան առարկայ պիտի դառնան Հայաստանի երիտասարդական բանաստեղծութեան ճշմարիտ նորարարները, որոնք որպէս բանի նոր սպասարկուներ եւ կոչեցեալներ, նոր խօսք ըսելու տենդէն բռնուած կը տառապին բանաստեղծութեան ներքին խռովքով:

Արհամարհելի քանակ եւ որակ չեն ասոնք Հայաստանի մէջ: Ծարժում են, եւ խմբական ներկայութիւն: Աշխուժութիւն կը բերեն իրենց վերանորոգիչ եւ թարմագեղ ստեղծագործութիւններով: Որքան ալ անոնք յաճախ կը զայրացնեն երէցները, աւանդական սահմանազօն մէջ գտնուողները, սակայն անկասկած որ բարբար ու ներգործօն է իրենց ներկայութեան ազդեցութիւնը նոյնիսկ երէցներուն վրայ:

Կ'ապրին ու կը ստեղծագործեն քսաներորդ դարու կշռոյթով եւ համազգացութեամբ: Նոյնիսկ իրենց հայրենասիրական ապրումները եւ զգացողութիւնը իւրայատկութեամբ կը յատկանշուին եւ հետաքրքիր աշխարհ մը կը բացայայտեն: Կը սիրեն հայրենիքը, քսաներորդ դարու մարդու աշխարհայեացքով՝ արդէն յիսնամեայ պետական կեանք նուաճած ժողովուրդի զիտակցութեամբ եւ հատարմութեամբ, վեր մնալով աժան եւ ընթացիկ հայրենասիրական զեղումներէ եւ քարոզչութենէ: Նմոյշ մը՝ Յովհաննէս Գրիգորեանի հայրենասիրական բանաստեղծութենէն, որ նուիրուած է Սովետական Հայաստանի յիսնամեակին, եւ խորագրուած՝ «Քո Հետ եւ Քո Համար»):

Ես այս երգը երգում եմ սկիզբից
 որովհետեւ դու նա ես
 որին կորցնելուց յետոյ էլ ոչինչ չեմք ունեայ կորցնելու
 որովհետեւ առանց քեզ անձրեւը ջուր է սովորական
 լեռները քարերի կուտակում
 սէրը շփելուքիւմ արեւոյդ
 եւ գաւակ ծնելը յանցագործութիւն

Ներիր որ քո գովքը ես չեմ գումագարդում
 Նոյի տապանի որումնան տեղագիւմ ջանքով
 կամ վարդանների եւ վասակների
 քաջագործութեան մանրամասներով
 որովհետեւ երգը որ պիտի ուղղուի քեզ
 պիտի նոր լինի քո նման
 որովհետեւ դու նոր ես ամէն օր
 եւ պիտի լինես այդպէս շարունակ

Իրենց ներշնչումները մեր ժողովուրդի հազարամեակներու պատմութեան սեփական մշակոյթի ակունքներէն ստանալով մէկտեղ՝ չեն բաւարարուիր ատով եւ կը բացուին ժամանակակից համաշխարհային բանաստեղծութեան տրոփին առաջ: Հաղորդ են համաշխարհային բանաստեղծութեան նոր տեղաշարժերուն: Եւ այդ առաջինութիւններով եւ հմտութեամբ ալ կը պատուաստեն արդի Հայ բանաստեղծութիւնը:

Այս առնչութեամբ հետաքրքրական են Հայաստանի երիտասարդ բանաստեղծներու ջահակիրներէն Ռազմիկ Գաւոյեանի մտածումները. «Երիտասարդ գրողներին համար ամենակարեւորը մտում է միշտ կողմնորոշուելը, որ, ինձ թւում է, ամենից առաջ կապուած է հայ մեծահարուստ գրականութեան խոր ու ճշը-

մարտացի ուսումնասիրութեան եւ ըմբռնման հետ: Ես չեմ ուզում ասել, թէ աշխարհում հայ դրականութիւնից բարձր ուրիշ դրականութիւն չեմ ընդունում: Մանաւանդ այն, ինչ կատարում է հիւսիսային համալսարհային պոեզիայում, հետաքրքրական է եւ ուսանելի մա շատ բան ունի իր մէջ: Սակայն այդ բոլորից պէտք է օգտուել այնչափ, որ չստեղծուի հողից կարուած, անհայրենիք, կեանքի կեղծ ընկալումներով դրականութիւն:

«Ինքնաճանաչումը շատ բարդ ու դժուարին ճանապարհ է, եւ ինձ թւում է, որ դա խորապէս կապուած է սեփական մշակութային հարստութիւնների ճշմարիտ ճանաչողութեան հետ: Այլապէս կը մնանք օդում կախուած, անցեալ, անժողովուրդ: Մենք ճակատագրով կապուած ենք մեր մեծ մշակոյթին: Մեր երկրի մեծերը մեր կենսագրութիւնն են, նրանք են ստեղծել մեր տոհմական պատմութիւնը, եւ այդ նրանց ճառագայթած զգացողութիւններն են, որ առաջին հերթին մեր մէջ արթնացնում են ինքնաճանաչման առաջին դրացումը»: (1)

Եթէ Հայաստանի երիտասարդական բանաստեղծութեան ներկայացուցիչները կ'օգտուին Նարեկացիի, Սայաթ Նովայի, Դ. Վարուժանի, Կ. Զարեանի, Սիամանթոյի, Մեծարենցի, Ե. Զարենցի, Պարոյր Սեւակի ստեղծած բանաստեղծական ավանդներէն եւ դրական հարուստ ժառանգութենէն, միաժամանակ անտարբեր չեն սակայն համալսարհային բանաստեղծութեան դասական եւ ժամանակակից դէմքերու ստեղծագործութիւններուն հանդէպ: Կը հետեւին, կը կարգան եւ կ'իլլրացնեն զանոնք եւս, իրենց խառնուածքի սեփական դրոշմը դնելով իրենց բանաստեղծութիւններուն վրայ: Այսօր՝ Հայաստանի երիտասարդական բանաստեղծութեան համար անձանօթ անուններ չեն Պոտլերը, Բէմպօն, Վերլենը, Վալերին, Էլիօթը, Օտլընը Թոմսը, Փաուլսը, Մակրեթը, Պրեյլերը, Ապոլինները, Լորկան, Քօքթոն, Կինզլըրը, Պոպ Տիլընը, Հէրոլտ Բիլթըրը, Էտ. Ալպին, Կրէկորի Գորսօն, Լորենս Ֆէրլէնկէտին:

Չմոռնանք յիշատակել նաեւ սովետական տարբեր հանրապետութիւններու եւ ազգութիւններու արդէ բանաստեղծներու անունները, որոնցմէ շատեր արդէն նուաճած են համալսարհային ճանաչում եւ արժէք: Այսպէս՝ Եւտուշէնկոն, Մեծեւայտիսը, Ռասուլ Համդատովը, Ռոբերտ Ռոժդեստովենսկին եւն.:

1) «Գրական Թերթ», 1965, 24 Դեկտեմբերի համար:

«Արդի Բնաստեղծութեան Մատենաշարը» կարելոր նախա-
 ձեռնութիւն մըն էր: Ալ. Թօփճեանի խմբագրութեամբ եւ թարգ-
 մանութեամբ լոյս տեսան ժառ Պրեյլերէն հատընտիր մը, իսկ Աբ.
 Ալիքեանի թարգմանութեամբ հատընտիր մը Ապոլիներէն: Մա-
 տենաշարը, որ իրեն համար ձգտում ունէր հաղորդ պահել մեր
 բանաստեղծութիւնը համաշխարհային արդի բանաստեղծու-
 թեան յառաջընթացին, թարգմանական ճանապարհով, չչարու-
 նակուեցաւ դժբախտաբար:

«Գարուն» երիտասարդական ամսագիրը եւս «20-րդ դար»
 խորագրին տակ, պարբերաբար իր ընթերցողներուն ներկայացուց
 համաշխարհային բանաստեղծութենէ հատընտիր թարգմանութիւն-
 ներ:

Հայաստանի երիտասարդական բանաստեղծութեան ճամ-
 բան հարթողը իր բանաստեղծական տեսութիւններով եւ ստեղ-
 ծագործութիւններով հանդիսացաւ եղբրաբախտ Պարոյր Սե-
 ւակը: Անոնցմէ շատերը ինք հովանաւորեց եւ խմբագրեց անոնց
 առաջին զիրքերը, ինչպէս Ռազմիկ Դաւոյեանի «Իմ Աշխարհը»:
 Իսկ ուրիշներ քալեցին իր բացած նոր ճամբաներէն:

Մեր փորձը սակայն կ'ընդգրկէ Կարիկ Պասմաճեանի ընո-
 ըռումով՝ «Հայաստանի մինչեւ 30 տարեկանների բանաստեղծու-
 թիւնը»: Իրենց ստեղծագործութիւններու քննարկման անցնելէ ա-
 ռաջ, պիտի ծանօթանանք իրենց բանաստեղծական ըմբռումնե-
 րուն: Ինչպէ՞ս կը հասկնան եւ կ'ըմբռնեն արդի բանաստեղծու-
 թիւնը:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐՈՒ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի երիտասարդական բանաստեղծութեան ինքնու-
 ըռոյն ներկայացուցիչներէն է Յովհաննէս Գրիգորեան: Ճակաւին
 ոբեւէ հատորի հեղինակ չէ: Իր բանաստեղծութիւնները տպուած են
 «Գրական Թերթի» եւ «Գարուն» ամսագրի մէջ ընդհանրապէս: Իր
 եւ իր սերունդին մշակած բանաստեղծութեան մասին, Յովհաննէս
 Գրիգորեան զրի առած է տեսական խոհեր, որոնք կը կազմեն իրենց
 արուեստի հանգանակը: Մեղադրանք մը ուղղուած է Հայաստանի
 երիտասարդ բանաստեղծներու հասցէին: Եւ այդ մեղադրանքը կը
 վերաբերի ժամանակակից օտար դրականութիւններէ ազդեցութեան
 խնդրին: Փոխ-առնուած գրեթակերպով բանաստեղծութիւն մը կեր-
 տելու նոր ոճերուն: Անյանդ եւ առանց կէտադրութեան գրելու կերպն
 է այս, որ կը բնորոշուի որպէս «սպիտակ բանաստեղծութիւն»:

Աղբիւրը ժառ Պրեզիդենտն ու Ապոլլիններն են, ժամանակակից բանաստեղծութեան երկու խորհրդանիշ բեւեռները: Յովհ. Գրիգորեան անդրադառնալով աղբեցութեան խնդրին, իր զարմանքն ու վրդուլումը կը յայտնէ մեր զրականութեան համար էական նշանակութիւն ունեցող աղբեցութեան հարցի մասին՝ երէցներու կողմէ բանաձեւուած մեղադրանքին նկատմամբ: Ու կը յիշէ բանաստեղծութեան յորինումի տարբեր յղացքներ եւ ժանրեր, որոնք իրենց ժամանակին փոխ առնուած են. դադելը, սոնետը, տրիոլետը: «Վերցուցած ենք – հարց կու տայ Յովհաննէսեան – ուրիշէն. ճիշդ ենք արել: Գաղել հնարելու մասին չի մտածել եւ ոչ մի Հայ: Հայ քերթութեան համար սա բաւականին օտար կառուցուածք է: Ուրեմն, ինչպէ՞ս վարուենք եղիշէ Չարեհնցի եւ Տէրեանի զաղելների հետ: Ուրեմն հայկական կամ ոչ հայկական ձեւի մասին խօսելը բոլորովին աւելորդ է, թէեւ առաջին հարուածը, որ հասցուեց նոր սերունդին, այդ առումով էր»: (2)

Հայաստանի երիտասարդ բանաստեղծները կը քննադատուին նաեւ աւանդներէն հեռանալու մեղքով: Ըստ Յովհ. Գրիգորեանին, իւրաքանչիւր դար եւ ժամանակաշրջան կը ստեղծէ իր աւանդները, որ համապատասխան կ'ըլլայ տուեալ ժամանակի պահանջներուն, զիտական յառաջդիմութեան զարգացման, մակարդակին: 20րդ դարու Բ. կէսը ունի իր ուրոյն պահանջները, որ կը տարբերի զինք կանխող դարերու արուեստի եւ թեքնիկի պահանջներէն: Եւ եթէ երիտասարդ բանաստեղծները անսալով ժամանակի ձայներուն, կը ստեղծեն ներկայ դարու համապատասխան աւանդներ մեր բանաստեղծութեան համար, որ միաժամանակ քայլ կը պահէ ժամանակակից համաշխարհային բանաստեղծութեան արուեստի մակարդակին հետ՝ չի նշանակեր որ կը հեռանան հայկական աւանդներէն: Աւանդները կրկնելը՝ աւանդներուն հաւատարիմ մնալու ստուգանիշ չէ եւ չի կրնար ըլլալ: «Գեղեցկախօսութենէն» հրատարիլը, ամենաջգեղ բառերով բանաստեղծութիւնը գունազարդել խուսափելը, ածականներու հեղեղէն խրտչիլը, որքան ալ հին հասկացողութեամբ «ապաբանաստեղծականում է բանաստեղծութիւնը», սակայն «իր առաջընթացի մէջ դառնում աւելի մարդկային ու մարդամօտ»:

Ստորեւ մէջբերուած տողերը աւելի յստակ բնութագիրը կու տան Հայաստանի երիտասարդ բանաստեղծներու արուեստի մտահոգութիւններուն:

2) Յովհ. Գրիգորեան, Թէ ինչպէս «Անհետացած» Բանաստեղծութիւնը, «Գրական Թերթ», 1970, քիւ 45:

«Այսօր, երբ մարդկանց բոլոր զգայարանները չափից աւելի լարուած են եւ զգացումները կոնկրետացած, անհնարին է յանգաւորուած խօսելը: Իսկ հիմա պոեզիան խօսել է նշանակում (առաջ՝ երդել), ճիշդ խօսել: Այս դէպքում իւրաքանչիւր բառ անփոխարինելի է իր արժէքի տեսանկիւնից, իսկ քանի որ յանդաւորելու դէպքում վտանգ կայ յանուն կոկիկ յանդի գնալ բաղմաթիւ բառափոխութիւնների, ուրեմն այժմ աւելի ճիշդ կը լինի ընտրել սպիտակ բանաստեղծութեան կառուցման ձեւը: Եթէ սիրոյ մասին է խօսքը, էլի ամէն ինչ նոյնն է մնում, նոյն պարզ նախադասութիւնները, անպաճոյճ բացատրութիւնները եւ անկեղծ խոստովանութիւնները, որովհետեւ էլի նոյն մարդն է խօսում, մարդ, որը գիտէ Վիեթնամի, ատոմային ռումբի, ինֆակտի եւ այլ պրոզայիկ թուացող դաժան ու ողբերգական փաստերի գոյութեան մասին: Այսինքն՝ զոսուեց զգացմունքը: Իայց զգացմունքային դարձաւ իմաստը»: (3)

1966 թ.ի The Atlantic-ի Օգոստոսի Համարին մէջ ամերիկացի բանաստեղծ Սթանլի Գունիցի, անգլիացի բանաստեղծ Օտրնի Հետ, Արդի բանաստեղծութիւնը յուզող հարցերու մասին ունեցած հարցադրոյցի ընթացքին յայտնած միտքերը Հանդիտութեան եզրեր կը պահեն Յովհաննէս Գրիգորեանի բանաստեղծութեան մասին ունեցած ըմբռնումներուն հետ:

Գունից կ'ըսէ. «Արդի բանաստեղծութեան ամենէն յատկանշական ոճը ձայնի մտերիմ շեշտն է, անձէ մը անձ խօսակցութիւն է եւ ոչ թէ մեծ հասարակութեան մը: Աղմկոտ այս աշխարհին մէջ լաւագոյն կերպն է մեղմ խօսիլը: Թերեւս լսելի կը դառնայ այդ ձեւով»:

Արմէն Մարտիրոսեանի անունը յաճախ յիշուած է երիտասարդ բանաստեղծներու փաղանդին մէջ, սակայն քիչ բանաստեղծութիւններ տպուած են իրմէ զրական մամուլին մէջ: «Գրական թերթ»ի երիտասարդական բանաստեղծութեան նուիրուած բանավէճին մասնակցելով, Արմէն Մարտիրոսեան պարզաբանած է այն նոր մտածողութիւնը, որ կը վերաբերի երիտասարդներու որոնումներուն եւ իր բառերով՝ «երկունքներով յղի ճանապարհին»: Ան կ'ամբողջացնէ Յովհ. Գրիգորեանի կողմէ յայտնուած խոհերը՝ երիտասարդական բանաստեղծութեան տեսութեան շուրջ: Արմէն Մարտիրոսեան նախ կը ժխտէ այն դաղափարը թէ երիտասարդները ուրացման ոգի եւ մօտեցում կը ցուցաբերեն դասական գրակա-

նութեան մեծերուն հանդէպ: Կը խոստովանի թէ մեծերը կը շարունակեն մնալ իրենց ուսուցիչները: Մեծեր, բանաստեղծութեան մէջ, որոնք տակաւին ուսանելի շատ աւանդներ կը բովանդակեն իրենց բանաստեղծական վաստակին մէջ: Եւ կու տայ անունները հայ եւ միջազգային մեծութիւններու. Նարեկացի, Տանթէ, Թումանեան, Պուշկին, Վարուժան, Լորկա եւ Չարենց:

Ասոր առջնութիւնը սակայն՝ դրական, առողջ ու կենսունակ երեւոյթ կը համարէ երիտասարդներու՝ ժամանակակից համաշխարհային բանաստեղծութեան լաւագոյն ներկայացուցիչներու ստեղծարժեքութիւններու հանդէպ բացուած եւ ծանօթ ըլլալու իրողութիւնը: Այդ է մեկնակէտը մեր բանաստեղծութեան զարգացման հեռանկարներուն: Վերանորոգիչ շունչ, ոգի, թարմութիւն, եւ նորութիւն այդ ճանապարհով միայն կրնայ գալ: Իրաւացիօրէն ան կը յիշէ Վահան Տէրեանի օրինակը, որ իր ժամանակին, իր ժամանակակիցներուն կողմէ մեղադրուած է որպէս «եւրոպակա՛նացած», «հողէն կտրուած» բանաստեղծ: Ժամանակի քննութիւնը հաստատեց սակայն, որ Վահան Տէրեան մեր բանաստեղծութեան մեծագոյն քնարերգակներէն է:

Արմէն Մարտիրոսեան, արդի բանաստեղծութեան կարեւոր յատկանիշներէն կը համարէ ժամանակակից մարդու ապրումները, «հոգեկան եւ մտաւոր ունակութիւնները» արտայայտելու ձգտումը, որուն իրադրո՞ման հետամուտ են Հայաստանի երիտասարդ բանաստեղծները իրենց արդիաշունչ քերթուածներով: «Փոխուել են միայն ժամանակը, ժամանակակից մարդը. տառապանքը այլ երանդ է ստացել, խնդութիւնը՝ այլ, յոգնութիւնը՝ մի ուրիշ, ապրելը՝ բոլորովին ուրիշ»:

Ժամանակակից բանաստեղծութիւնը, ըստ իրեն, առանց ժխտելու մարդու զգացական հարուստ աշխարհին դոյութիւնը, կը ձգտի ըլլալ առաւելագոյն չափով իմացապաշտ խորքով: Որովհետեւ մտքի զարգացման այս դարուն մէջ, զգացականը եւ սրտայինը միայն չի գոհացներ ընթերցողը: «Այդ պոեզիայի ամենից աչքի ընկնող յատկանիշը զգացմունքների խտացումն է, համակենտրոնացումը՝ մտքի անմիջական հսկողութեան տակ»: (4)

Հոս կանգ չ'առնել Արմէն Մարտիրոսեանի կատարած ժամանակակից բանաստեղծութեան յատկանիշներու թւումը: Բանաստեղծութեան մէջ բառերուն խորհրդանշական եւ փոխաբերա-

4) Արմէն Մարտիրոսեան, Առողջ Որոնումների Ճանապարհին, «Գրական Թերթ», 1970, քիւ 41:

կան արժէք տալու յատկութիւնները, որքան ալ ըլլան ժամանակակից բանաստեղծութեան յատուկ երեւոյթներ, կու գան հինէն: Գրականութեան խորհրդանշապաշտական դպրոցէն, որուն վարպետները մեր բանաստեղծութեան մէջ կը հանդիսանան Սիամանթօ եւ Կ. Չարեան:

Արեւշատ Աւագեան եւ Հենրիկ Էդոյեան յախուռն եւ Համարձակ շեշտով կը պաշտպանեն եւ կ'արդարացնեն, բանաստեղծութեան մէջ նորարութեան՝ ըլլայ ձեւի, ըլլայ խորքի որոնումներու ձգտումը: Ասոնցմէ առջինը արդէն հեղինակ է 1968 թ.ին հրատարակուած բանաստեղծութիւններու հատորի մը՝ «Օրերի Յայտնութիւնը» խորագրուած:

Ըստ Արեւշատ Աւագեանի մեր դասական բոլոր բանաստեղծներն ալ իրենց ժամանակին եղած են նորարարներ: Երիտասարդական բանաստեղծութեան ցայտուն յատկանիշը կը համարէ «իբանհանգիստ եւ որոնող բովանդակութիւնը»: Յաւալի կը գտնէ ժամանակակից բանաստեղծներէ թարգմանութիւններ կատարելու պահանջ ու անբաւարութիւնը: Կը նկատէ թէ մեր արդի բանաստեղծութեան ճաշակը նրբացնելու փոխարէն՝ խաթարելու ժխտական դեր կը կատարեն, զբական հրապարակը ողորդող «կեղծ ազգային ու հայրենասիրական երգերը»: Եւ դառնութիւն կը յայտնէ թէ «Հայաստան» հրատարակչութիւնը իր հրատարակչական ծրագրին մէջ չ'ընդգրկեր երիտասարդ բանաստեղծներու գիրքերու հրատարակչութիւնը: Բանաստեղծական գիրքեր, որոնք մեր արդի բանաստեղծութիւնը «կեանքին ու դարին համընթաց» պահելու վստահութիւնը կը ներշնչեն:

«Ժամանակն է», կ'ըսէ ան, «մտածելու, որ մեր պոեզիային պակասում է բանաստեղծական տողի խտութիւնը, որ բառերի շնորհիւ կառուցուող բանաստեղծութիւնը մեռնում է անհարկի օգտագործուած բառերի առատութիւնից, որ բառերի առատութեամբ չի պայմանաւորում մտքերի առատութիւնը»:

Այս տեսակէտը կ'ընդհանրացնէ Հենրիկ Էդոյեան իր «Բառի որոնումը» (5) խորագրուած յօդուածով: Հետաքրքիր տեսութիւններ կը պարզէ Հենրիկ Էդոյեան, որոնք արժանի են լուրջ ուշադրութեան:

Առաջին հարցը, զոր կ'արծարծէ ան, բանաստեղծութեան հասկնալիութեան եւ անհասկնալիութեան խնդիրն է: Եթէ, կ'ըսէ ան, աւանդական բանաստեղծութեան ճաշակով առաջնորդուող ընթեր-

5) «Ազգ. Գրականութիւն», 1971, թիւ 1, էջ 3:

ցողին համար անհասկնալի են երիտասարդ բանաստեղծներու ստեղծագործութիւնները, ատիկա իրենց մեղքը է՛, այլ՝ ընթերցողին յետամնացութեան: Որովհետեւ «ներկայ աշխարհում ապրող մարդու բարդ կոմպլեքսը չի կարող բաւարարուել դրանով: Այդ կոմպլեքսը կարող է գեղագիտական բաւարարութեամբ չլինել զգալ իր անդիտակցութեան շարժումից, նրա տառապանքից»:

Ըստ Հենրիկ Էդոյեանի ստեղծագործել կը նշանակէ դանուիլ ժամանակի բարձրութեան վրայ: Եւ այդ ժամանակի բարձրութեան վրայ դանուելու համար անհրաժեշտ է խօսակցութեան մէջ մտնել ժամանակակից մարդկութեան հետ: Եւ բանաստեղծութիւնը լաւազոյն միջոցն է որ մենք ձգտինք համաշխարհային ասպարէզ դալու, որպէսզի կարողանանք լսելի ու հասկնալի ըլլալ նաեւ տարբեր աղբիւրներէն ընթերցողին կողմէ: Ի՞նչ տուեալներ անհրաժեշտ են հոն հասնելու համար:

Պէտք է վերջ տալ զգացմունքային դրականութեան, իր բաներով՝ «երգային բանաստեղծութեան»: 19-րդ դարու յատուկ երեւոյթ է բանաստեղծութեան մէջ այդ յատկանիշը, որ իր տեղը պէտք է զիջի մտքի բանաստեղծութեան: Զգացումը՝ փոխարինուի պոետական վիճակով: Զգացմունքները պէտք է բարձրանան մտքի պոետական խօսքը ձգտի ձերբազատուիլ աւելորդ ոլորտը, եւ բանաստեղծական խօսքը ձգտի ձերբազատուիլ աւելորդ դարդարանքներէ: «Պոետը ձգտում է հասնել իրերի էութեանը: Իրերը փոխադրում են բառի մէջ, բառը դուրս է դալիս իր նեղ իմաստից: Օրերի ընթացքն անցնում է բառի միջով, որ պոետը ձգտում է կանգնեցնել խօսքի ստրուկտուրայում: Բանաստեղծութեան մէջ նա կարծես փորձում է վերակառուցել անցնող օրուայ կոնստրուկցիան»:

Հենրիկ Էդոյեան՝ երիտասարդական բանաստեղծութեան յատկանիշներէն շեշտը կը դնէ նաեւ մեթաֆորի վրայ: Եւ ըստ իրեն եթէ մեթաֆորը դասական բանաստեղծութեան մէջ կ'օգնէր մտայղացման իրագործման, ժամանակակից բանաստեղծութեան մէջ մեթաֆորը դարձած է ներքին նպատակ: Եւ երիտասարդական բանաստեղծութեան յատուկ երեւոյթ է որ մեթաֆորը իր ընդթով կը մօտենայ միջին:

«Մեթաֆորն աշխարհի գաղտնիքն է բանաստեղծի հոգեկան տեսիլքի մէջ: Բանաստեղծը չի փնտռում գաղտնիքը, այլ գաղտնիքն ինքն է ներկայանում նրան: Այդ գաղտնիքը մշտապէս բանաստեղծի աչքերի առջեւ է: Գաղտնիքի իմացութիւնը ինտելեկտուալ պրոցես է, ուր մասնակցում են հոգեկան՝ բոլոր ուժերը: Առաջին հերթին գաղտնիքը ներկայանում է իբրեւ բառ: Բառի մէջ պոետը կենտրոնացնում է իր հոգեկան բոլոր կարողութիւնները:

Կլասիկ պոեզիայում առաջին պլանի վրայ խօսքն է, ժամանակակից պոեզիայում՝ բառը:» (6)

Փորձեցինք Հայաստանի երիտասարդական բանաստեղծութեան չորս ներկայացուցիչներուն պարզած տեսութիւններուն ընդմէջէն բիւրեղացնել իրենց ըմբռնումները բանաստեղծութեան մասին: Այդ ըմբռնումներն են, որ զիրենք կը հակադրեն աւանդական բանաստեղծութեան ձեւին եւ խորքին հաւատարիմ երէցներուն դէմ:

Ինչ որ որպէս տեսութիւն եւ ըմբռնում կը պարզեն Հայաստանի երիտասարդները հետաքրքրական է մեր բանաստեղծութեան զարգացման համար: Անոնք կը հաւատան թէ այս պիտի ըլլայ մեր ժամանակակից բանաստեղծութեան զարգացման մայրուղին: Յառաջապահ եւ արդիական մտածողութիւն մըն է, որ ժամանակի ընթացքին աւելի խորանալով եւ արմատներ նետելով՝ մեր արդի բանաստեղծութիւնը պիտի օժտէ բանաստեղծական ստեղծագործութիւններու նոր եւ հարուստ բերքով:

«ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ»Ի ԲԱՆԱՎԷՃԸ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Գրական Թերթ»ն ու «Սովետական Գրականութիւն» ամսադիրը երիտասարդական բանաստեղծութեամբ կատարուող նոր տեղաշարժերու նկատմամբ յատուկ ուշադրութիւն ընծայեցին, իրենց էջերը տրամադրելով երիտասարդական բանաստեղծութեան շուրջ բացուած բանավէճին: Ատի՜թ տուին քննադատներու, երիտասարդ բանաստեղծներու եւ երէց գրողներու որ մասնակցին այդ բանավէճին՝ արտայայտելով իրենց տեսակէտները: Յայտնուեցան թեր ու դէմ կարծիքներ: Երէցները յայտնեցին իրենց դժգոհութիւններուն տուն տուող պատճառները՝ մատնանշելով երիտասարդական բանաստեղծութեան խոցոտ եւ վիրաւոր կողմերը: Իսկ երիտասարդները ասպարէզ իջան ու բեմ գտան իրենց նոր ըմբռնումները հրապարակելու եւ պաշտպանելու: Որքան ալ բանավէճի ընթացքին յայտնուած տեսակէտներու մէջ ծայրայեղ մտքեր կային, օգտակար եւ շահեկան դարձաւ մեր բանաստեղծութեան ներկան յուզող եւ վաղուան հեռանկարներուն համար ալ ճանապարհ հարթող բանաստեղծական հարցերու քննարկումը:

Երիտասարդական բանաստեղծութեան նուիրուած «Գրական Թերթ»ի բանավէճին բացումը կը կատարէ Ստ. Կուրտիկեան, յօդ-

6) Նայմը:

ւածաչարքով մը: (7) Ստ. Կուրտիկեան բուռն հակաճառող է երիտասարդական բանաստեղծութեան արդիական ձգտումներուն: Ընդդէմ խտանաճանաչումներուն հետ, զգալի են նաեւ ծայրայեղ եւ ուրացումի հակամէտ տեսակէտներ: Կ'անդրադառնանք իր պարզած մտքերէն գլխաւորներուն:

Ստ. Կուրտիկեան կ'ընդունի թէ համաշխարհային երեւոյթ են գեղարուեստական մարդի մէջ բանաստեղծական մտածողութեան յեղափոխումները: Թարմաշունչ խօսք որոնելու երկունքը: Այդ բանաստեղծական նոր մտածողութեան յեղափոխումներուն եւ երկունքին մասնակից ու հաղորդակից են նաեւ Հայաստանի երիտասարդական բանաստեղծութեան ներկայացուցիչները: Բնակաճարար, առաջին որոնումները խարխափումի հանդուրան մը պիտի ըլլորեն: Այդ խարխափումներէն պիտի ծնի ճշմարիտ բանաստեղծութեան լոյսը: Եւ որպէսզի ապահովուի մեր բանաստեղծութեան առաջնթացը, ան կարօտ է գրական լուրջ հովանաւորութեան եւ առաջնորդութեան: Մինչեւ հոս դրական է Ստ. Կուրտիկեանի մօտեցումը եւ քաջալերական: Ասկէ անդին սակայն ան կը սկսի ջրնադատական մօտեցում ցոյց տալ եւ վերապահութիւն յայտնել: Իր տարակարծութիւնը չի պահեր այն երիտասարդ քննադատներուն նկատմամբ, որոնք շոյլ գովասանքներով եւ գնահատութիւններով մեծամտութեան կ'առաջնորդեն երիտասարդները, անոնց վերադրելով այնպիսի արժանիքներ, որոնցմէ զուրկ կը համարէ զանոնք, բացառելով կարգ մը շնորհալիներ:

Ան ճիշդ չի գտներ նորարարութեան կիրարկումը կապել միայն երիտասարդներուն անուան: Աւագները, կ'ըսէ, որոնք անցած են կեանքի երկար ճանապարհ եւ այդ իսկ բերումով ունեցած են կեանքի հարուստ կենսափորձ, կրնան ճշմարիտ նորարարութեամբ վարպետութեան բարձունքներ նուաճել:

Մէջբերելով Հայնէի այն կարծիքը թէ, «Ամէն դար, ստանալով նոր գաղափարներ, ստանում է նաեւ նոր աչքեր», Կուրտիկեան կը հաստատէ երիտասարդներու այն վարկածը թէ իւրաքանչիւր գրական նոր սերունդ, նոր աշխարհագրացողութիւն կը դրսեւորէ: «Գրական նոր սերունդները կեանք են մտնում նոր աչքերով, նոր հետաքրքրութիւններով ու նպատակագրումներով, գեղարուեստական ու սոցիալական նոր պահանջներով, գեղագիտական նոր ըմբռնումներով»: Իսկական նորարարութիւնը, Ստ. Կուրտիկեան

7) Տես՝ «Գրական Թերթ», 1970, 28 Օգոստոսի եւ 4 Սեպտեմբերի համարները:

նին եւ իրեն պէս մտածողներուն համար հետեւեալն է. «Իսկական նորարարը բաց սրտով է ունկնդրում դարաշրջանի ձայնին, եւ իր ստեղծագործութիւնները դադարաւորապէս ու յուզական մեծ ուժով նպաստում դարաշրջանի գլխաւոր հարցերի լուծմանը»:

Չափազանցուած շեշտ կը կրէ այն քննադատութիւնը, թէ երիտասարդ բանաստեղծները իրենց ստեղծագործութեանց մէջ արտայայտող կը հանդիսանան միսթիքական յոռետես ու մռայլ զգացումներու: Կուրտիկեան ասոր կը հակադրէ կենսասիրութիւն ներշնչող բանաստեղծութիւնները:

Ստ. Կուրտիկեան իր վերապահութիւնը կը յայտնէ նաեւ անյանգ եւ առանց կէտադրութեան դրելակերպին նկատմամբ, յիշելով այն իրողութիւնը թէ դրելակերպի այս ոճը նորութիւն չէ եւ երկու տասնամեակէ ասդին կը փորձուի Պոլսահայ բանաստեղծներու կողմէ:

Ուժեղ անհատականութիւններ կը պակսին տակաւին եւ ընդհանուրէն զատորոշուող գազաթներ ստեղծուած չեն, կ'ըսէ Ստ. Կուրտիկեան իր դատումներուն մէջ: Խիստ է, կը խորհինք, դատումի այս ոճը: Տասնամեակի մը ընթացքին գազաթներ սպասելը շատ պիտի ըլլար: Սակայն արդէն ուժեղ անհատականութիւն զգացուցած է Ռազմիկ Դաւոյեան եւ այդ ճանապարհի վրայ են Յովհ. Գրիգորեան եւ Արեւշատ Աւագեան:

Քննադատ Սեւակ Արզումանեան «Հայրենական աւանդները եւ երիտասարդական պոեզիան» խորագրուած յօդուածին մէջ (8), ընդունելով հանդերձ երիտասարդ բանաստեղծներու աշխարհային նոր ձեւով ընկալելու եւ արտայայտելու ստեղծագործ կարողութիւնները, ինքզինք հակասելու գնով կ'իյնայ ծայրայեղութեան մէջ եւ ամբողջ մտածումները կ'առաջնորդէ երիտասարդական բանաստեղծութեան ժխտման: Չկան, կ'ըսէ, ինքնատուութեամբ փայլող անհատականութիւններ, եւ ամբողջ երիտասարդական բանաստեղծութիւնը վերաւոր կը դնէ իր մտածողութեան միակերպութեամբ եւ արտայայտչական ձեւի նոյնանման կաղապարով: Կարծես թէ, կ'ըսէ ան, բոլորն ալ կը մտածեն նոյն ձեւով:

«Պարոյր Սեւակի լայն մասսայականութեան գաղտնիքը վերջին մէկուկէս տասնամեակի հասարակական շարժման, ազգային-քաղաքական խնդիրներին վարպետօրէն արձագանգելու մէջ պէտք է որոնել: Նա դարձաւ ժողովուրդ-հայրենիք-բանաստեղծ առանցքի լաւագոյն լուծողը, գտաւ քնարական հերոսի եւ հասա-

8) «Գրական Թերթ», 1971, 29 Յուլիուարի համար:

բակութեան կապի օղակները, բացայայտեց սոցիալական մի շարք հակասութիւններ, լայն ու սրտաբաց զրոյց բացեց ժողովուրդի հետ:» (9)

Գէորդ Հատիտեան մասնակցելով «Գրական Թերթ»ի բանավէճին, կը ձայնակցի երիտասարդական բանաստեղծութիւնը քննադատողներու համանուագին, հետեւեալ դիտողութիւններու արձանագրութեամբ: Նախ՝ անհեթեթեան համադր կը համարէ երիտասարդական բանաստեղծութիւն ընորոշումը, այն առարկութեամբ թէ բանաստեղծութիւնը կարելի է այդպիսի ձեւակերպումի ենթարկել: Այլապէս, կ'ըսէ ան, ըստ «մարդու տարիքային առանձնայատկութիւնների» զոյութեան իրաւունք պիտի ստանային պատանեկան բանաստեղծութիւն, չափահասութեան բանաստեղծութիւն, եւ ծերութեան բանաստեղծութիւն ընորոշումները: Կայ միայն իրաւ բանաստեղծութիւն: «Ոչ ոքի մտքից չի անցնում Գուրեանի պոեզիան երիտասարդական կոչել: Հետեւում է ուրեմն որ պոեզիան ոչ թէ տարիքի խնդիր է, այլ տաղանդի», կը գրէ ան: Գէորդ Հատիտեան կը զլանայ նոյնիսկ գրական նոր սերունդ սահմանումը, որովհետեւ ըստ իրեն՝ «խակական սերունդը ժամանակաշրջանի գրականութեան վրայ նոր հորիզոններ բացող, գեղարուեստական նոր իտէալների երկունքով ապրող, իրական կեանքի նոր խնդիրներով տաքնապող հաւաքական հողերանութեան ու ջանքերի արտայայտութիւնն է:» (10) Հայաստանի երիտասարդական բանաստեղծութիւնը, ըստ Գէորդ Հատիտեանի, «միայն փորձեր ու ձգտումներ են տակաւին»:

«Գրական Թերթ»ի բացած բանավէճին տրամադրութիւնները, առհասարակ դէմ են երիտասարդական բանաստեղծութեան ստեղծագործական աշխարհայեացքին:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ» ԱՄՍԱԳՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԿԼՈՐ ՍԵՂԱՆԸ,
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Սովետական Գրականութիւն» ամսագրի խմբագրութեան երկու տարի առաջ կազմակերպած կլոր սեղանը՝ երիտասարդական բանաստեղծութեան մասին, բացումը բանավէճի ամփոփման եւ համադրման ծառայեց: Բանավէճի ազդանշանը տուած էր երիտա-

9) Նայճը:

10) «Գրական Թերթ», 1971, 8 Յունուարի համար:

սարդ քննադատ Ալպերթ Կոստանեան իր «Ինքնադրսեւորման տա-
ռապանքը» յօդուածով: (11)

Կլոր սեղանին իրենց մասնակցութիւնը բերած են քննադատ-
ներ, միջին սերունդի բանաստեղծներ եւ երիտասարդներ:

ՔՆՆԱԴԱՏՆԵՐՈՒՆ ԿԵՑՈՒԱԾՔԸ

Քննադատ Սուրէն Աղաբաբեան «բանաստեղծութեան սրբազան
օրէնքներու ու գեղեցիկ չափանիշներու ոտնահարումը» կը տեսնէ
երիտասարդ բանաստեղծներու պարզած տեսութիւններուն մէջ:
Սրբազան օրէնքներ եւ գեղեցիկ չափանիշներ, որոնք ըստ իրեն ոչ
թէ այս կամ այն բանաստեղծի սեփականութիւնն են, «այլ պոե-
զիայի դարաւոր պատմութեան կուտակուած եւ ստուղուած սկզբ-
բունքներ»: Իսկ անդրադառնալով երիտասարդներու ստեղծագոր-
ծութիւններուն, հոն աւելի շատ կը դնէ «միապաղաղութիւնն ու
խարուսիկ բանաստեղծականութիւնը», քան թէ «մարդկայնօրէն
զգացուած ապրումն ու բնական մտածումը»: Ճշմարիտ բանաստեղ-
ծութեան կենդանի աղբիւրը, Սուրէն Աղաբաբեան կը դաւանի իրա-
կան հողէն ծնած «մարդկային կենդանի ապրումներէն եւ կեանքի
բնական դոյներէն» ձեւ ստացած բանաստեղծութիւնը: Նորերու փոր-
ձերը ըստ իրեն դատապարտուած են ձախողութեան: (12) Ժխտա-
կան է քննադատ Սուրէն Աղաբաբեանի կեցուածքը:

Կ'արժէ աւելի երկար կանգ առնել քննադատ Վազգէն Մնա-
ցականեանի պարզած մտքերուն վրայ, որոնք հիմնուած են նորե-
րու հանդէպ ճշմարիտ հասկացողութեան, հոգատար սիրոյ եւ
խստապահանջութեան սկզբունքին վրայ:

Ան հաւատքով ու յուսապինդ նայուածքով կ'ողջունէ Հա-
յաստանի երիտասարդ բանաստեղծները, անոնց վաղուան հունձ-
քին մէջ կանխատեսելով այն կանաչ հրդեհները, զոր պիտի բերեն
մեր դրականութեան: Գարնան համբերութիւն ունենալ կը թելադ-
րէ բոլոր անոնց, որոնք յոռետես են եւ ժխտական վերաբերումի
արտայայտիչներ: Որովհետեւ, կ'ըսէ ան, երիտասարդական բա-
նաստեղծութեան այն ծիլը, որ կ'աճի այսօր, վաղը պիտի ծառա-
յէ բանաստեղծութեան գերագոյն կոչումին՝ «իբ ուսերին պահե-
լով աշխարհ եւ մարդկային ճակատագրեր»: Գրական այս նոր սե-
րունդը, ըստ իրեն, եկած է գրադեցնելու ոչ թէ ուրիշը, այլ՝ իբբ:

11) «Սովետ. Գրականութիւն», 1969, քիւ 6:

12) Սուրէն Աղաբաբեան, Դէպի Կենդանի Աղբիւրները, «Սովետ. Գրակա-
նութիւն», 1971, քիւ 2:

Հետագայ մէջըբրուած տողերուն մէջ կարելի է տեսնել այն ճշմարիտ գնահատութիւնը, որ կը վերաբերի երիտասարդ բանաստեղծներու համարձակ որոնումներուն եւ ստեղծագործական անկեղծութեան: «Այս էլ ասեմ, որ Չարենցից յետոյ բանաստեղծական եւ ոչ մի նոր սերունդ այնպիսի ոգեւորութեամբ, հաւատով ու հանգստութեամբ երբեմն էլ նաեւ մեծամտութեամբ, իր ստեղծագործական որոնումները չի ներկայացրել ընթերցող հասարակայնութեան ու գրական քննադատութեան դատաստանին, ինչպէս այսօրուայ տղաները: Այդ համարձակութիւնը առաջին հերթին հոգեւոր անկեղծութեան արտայայտութիւնն է, որոնումների տառապանքը մտերմօրէն ընթերցողին հետ կիսելու, դրա խսկական արժէքը որոշելու ցանկութիւն, յետոյ միայն անիմաստ աղմկաբարութիւն, կոճղի տեսանկիւնից աշխարհներ յայտնաբերածի մոլորութիւն, «մենք եկել ենք»ի փոխարէն «դուք չկաք»ի յոխորտում:» (13)

Քննադատ վաղգէն Մնացականեան լաւատես է նորերու ապագայ կարելիութիւններուն հանդէպ: Կը յայտնէ իր ուրախութիւնը նաեւ որ հրապարակ իջած են շնորհալի քննադատներ, որոնք իրենց գլխաւոր մտահոգութիւնը դարձուցած են երիտասարդական բանաստեղծութեան այսօրն ու վաղը:

Եղբակացեւելով իր խօսքը, վաղգէն Մնացականեան կը գրէ. «Այսօրուայ գրական նոր սերունդի լաւերն ու լաւագոյնները, այդ պրոցեսի բարդութեան դիտակցման եւ յաղթահարման ճանապարհին են: Գարնան նման եկել է այդ սերունդը: Եկէք, չոր խոտերի տեսանկիւնից չլճոենք այն կանաչի ճակատագիրը, որ վաղը նորէն ու դարձեալ թումանեանական հպարտութիւն է բերելու մեր սրտերին: Բարով էք եկել, ով նորեր:» (14)

Քննադատ Սէրգէյ Սարխինեան եւս գրական մօտեցում ունի: Սխալ կը գտնէ որոշ քննադատներու մօտեցման եղանակը, որ կասկածի տակ կ'առնէ բանաստեղծական նորագոյն ոճի գրական-պատմական օրինաչափութիւնները՝ որակելով մոլորութիւն եւ օտարամուտ շեղում: Կը թելադրէ հարցին մօտենալ այն մեկնակէտով, որ բանաստեղծական նոր ուղղութիւնը նկատի առնուի որպէս առարկայական իրողութիւն եւ ըստ այնմ կատարել գնահատութիւնը:

13) վաղգէն Մնացականեան, Հաւատում եմ, «Սովետ. Գրականութիւն», 1971, Թիւ 2, էջ 98:

14) Նոյնը:

Անհիմն կը նկատէ քննադատութեան կողմէ երիտասարդական բանաստեղծութեան հասցէին ուղղուած խօսքերը. «խրթին է», «անբովանդակ», «խեղկատակութիւն է», «դատարկաբանութիւն է» են. : Կ'ընդունի թէ երիտասարդ բանաստեղծները «հետամուտ են բարդ ու հետաքրքրական բանաստեղծական համակարգի» եւ թէ «Ակներեւ է, որ պոեզիայի նոր ուղղութեանը իւրայատուկ է մի որոշ վերացականութիւն, որ այն չի հասնում արտայայտչական յստակութեան, որ նրանում թոյլ է քաղաքացիական ոգին» : Սակայն, կ'ըսէ, այս թերութիւնները պատճառ չեն բանաստեղծական նոր արժէքներու ստեղծման : (15)

Սերգէյ Սարինեան օրինակ կը բերէ Պարոյր Սեւակը : 50-ական թուականներուն Պ. Սեւակի բանաստեղծական ոճի նորարական միտումներուն եւս վերագրուեցան «խրթնաբանութիւն», «բացարձակ դատողականութիւն», «օտար նմանողութիւն» են. : Սակայն 1970-ական թուականներու քննադատութիւնը ընդունեց Պ. Սեւակի «բանաստեղծական խոշոր անհատականութեան ինքնահաստատումը» . ճիշդ ասոր համար ալ Սերգէյ Սարինեան իր խօսքը խորագրած է «Ճկէք չգուշակենք» : Հարկաւ ակնարկութիւնը կ'երթայ սխալ դուշակութիւններու : (16)

Անդրադառնալով մեր ժամանակակից բանաստեղծութեան մէջ դոյրութիւն ունեցող աւանդական եւ արդիական ուղղութիւններուն՝ կը յառաջացնէ այն տեսակէտը թէ պէտք է բացարձակեցնել որեւէ մէկ ուղղութիւն, այլ ընդհակառակն՝ կենդանացման ու աշխուժացման շարժառիթ է «ոճերու եւ ուղղութիւններու բազմազանութիւնը գեղարուեստական մտածողութեան մէջ» : Այսինքն՝ աւանդականի կողքին ըլլայ երիտասարդականը, արդիականը, եւ մեր բանաստեղծութիւնը իր աւիշը ստանայ եւ ջուր խմէ բազմաթիւ ակունքներէ :

Կարելի է համաձայն չըլլալ այս եւ երիտասարդական բանաստեղծութեան դնահատուկութիւնը կատարող Սերգէյ Սարինեանի հետազայ մէջբերուած տողերու գաղափարներուն հետ :

«Ուստի, ոչ միայն չի կարելի անտեսել, այլեւ բացայայտ ասել, որ երիտասարդական պոեզիան նորարական պոեզիա է, որ նա միտում ունի հայ պոեզիայի մէջ բերել արտայայտչաձեւի մի որոշ թարմութիւն, բանաստեղծական մտածողութեան մի ուրոյն

15) Սերգէյ Սարինեան, Երէք Զգուշակենք, «Սովետ. Գրականութիւն», 1971, քիւ 2 :

16) Նոյնը :

եղանակ, պոեզիայի ատրիբուտները, բանաստեղծական սիւլաբո-
թանցիայի մի իւրօրինակ համակարգ եւ որ այս խմաստով նա ոչ
միայն իր նախորդի իւրացումն է, այլեւ նրա բացատումը (հասկա-
ցութիւն փրկիտափայական խմաստով):» (17)

Քննադատներ վաղդէն Մնացականեանի եւ Սերգէյ Սարին-
եանի կեցուածքները երիտասարդական բանաստեղծութեան մասին
«քմահաճ ժխտումէ» զերծ՝ դրական են ու քաջալերական:

Քննադատ եւ դրականագէտ էդուարդ Զրբաշեան կողմնո-
րոշուած է երիտասարդական բանաստեղծութեան դէմ: Ազգային
բովանդակութեան կորուստ կը համարէ եւ վնասակար մոլորու-
թիւն՝ երիտասարդներու նորարութիւնը: Ոչինչ կայ, կ'ըսէ, բացի
հայերէն լեզուէն, որ երիտասարդական բանաստեղծութիւնը կապ-
ւի «ազգային միջա-բնաւորութեան եւ հոգեբանութեան հետ»: Ե-
րիտասարդական բանաստեղծութեան քնարական հերոսը ընդհան-
րապէս մարդը կը նկատէ «ժամանակի եւ սեփական անձի մասին
բաւական վերացական խոհերով եւ յեղյեղուկ զգացմունքներ-
ով»: (18)

Ալեքսանդր Թօփճեան, որ Հայաստանի երիտասարդական
բանաստեղծութեան ջերմ պաշտպաններէն է եւ բանաստեղծութեան
երիտասարդ քննադատ, կ'սր սեղանը յարմարադոյն առիթը հա-
մարելով կը բանաձեւէ իր տեսակէտները: Յայտնենք նաեւ որ Ա-
լեքսանդր Թօփճեան վարելով «Գարուն» ամսադրի բանաստեղծու-
թեան բաժինը, կարելոր դեր կատարած է ու կը կատարէ երիտու-
սարդներուն ասպարէզ տալու եւ քաջալերելու մարդին մէջ:

Այն հակադրութիւնը, որ վերջին տարիներուն սրեցաւ երի-
տասարդներու եւ աւագներու միջեւ, երիտասարդ քննադատը կը
վերադրէ «բացարձակ այն մերժողական դիրքաւորման», որ ստի-
պեց երիտասարդները «կեցուածք բռնելու»: Իր տեսակէտով երի-
տասարդական բանաստեղծութեան մէջ զգացուող «ռոմանտիկական
եւ լիրիկական տարերջը» սկսած է յիսունական թուականներուն,
ապա բարդանալով փոխանցուած է 60-ական թուականներուն, ան-
կէ ալ՝ նորագոյն սերունդին: «Գուցէ աշխարհը պարաթոքաներով,
մեթաֆորների անդադար հոսքով, նոր պոետականութեամբ, եր-
բեմն էլ հիմիւրով զգալն է, որ սկզբնաւորուեց էմինի եւ Սեւակի

17) Նայնը:

18) Նյուարք Զրբաշեան, Գտնել ժամանակի Զարկերակը, «Սովետ. Գրա-
կամութիւն», 1971, քիւ 2:

տողերում եւ նոր որակ ստացաւ նոր սերունդի մի քանի բանաստեղծների մօտ :» (19)

Ինչպէ՞ս կարելի է վերջնական զաղափար կազմել եւ վճիռներ արձակել, Հարց կու տայ Ալ. Թօփճեան, բանաստեղծական նորագոյն սերունդի մասին, երբ տակաւին անոնց մեծ մասը Հատորով Հանդէս չէ եկած եւ իւրաքանչիւրէն Հատուկէնտ բանաստեղծութիւններ տպուած են ցարդ : Բանաստեղծական նորագոյն սերունդի զբաղան արժանիքը կը Համարէ այն իրողութիւնը, որ այսքան քիչ թիւով տպուած բանաստեղծութիւններով յաջողած է այսքան աղմուկ, իրարանցում եւ աշխուժութիւն ստեղծել :

Ալ. Թօփճեան յարմար եւ պատեհ կը նկատէ, որ երիտասարդական բանաստեղծութիւնը եւ երիտասարդական արձակի քննութիւնը Համատեղ կատարուի քանի «այս երկու ժանրերը զարգանում են զբաղան նոյն մթնոլորտում, զրեթէ միեւնոյն ժամանակամիջոցում» : Գալով ազդեցութեան խնդրին, կ'ընդունի թէ անժխտելի իրողութիւն է այդ : Օղտակար եւ զբաղան կը գտնէ ազդեցութիւնը : Այդ ազդեցութեան կապկումի եւ «արհեստական պատուաստումի» մեղքով տարագոյններուն ունի իր դիպուկ պատասխանը : Հայաստանի բանաստեղծական նորագոյն սերունդը Համազգացութեան ընդհանրութիւններ ունի աշխարհը յուզող խնդիրներու հետ : (20)

ՄԻՋԻՆ ՍԵՐՈՒՆԴԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐՈՒՆ ԿԵՑՈՒԱԾՔԸ

Սիւլվա Կապուտիկեան Հիմքէ զուրկ կը նկատէ աւագներու եւ երիտասարդներու միջեւ դոյուլութիւն ունեցող ենթադրեալ Հակամարտութիւնը : Կը խոստովանի թէ երիտասարդական բանաստեղծութեան մէջ ջանացած է գտնել լաւը : Մեր բանաստեղծութեան Համար յուսադրիչ երեւոյթ կը նկատէ որ երիտասարդական բանաստեղծութիւնը թելադրուած է ժամանակի շունչով եւ կարելի չէ, կ'ըսէ, դիւրին եզրակացութեան յանդիլ՝ որակելով զայն «անհեթեթութիւն» կամ «թիւրիմացութիւն» : (21)

Ըստ Ս. Կապուտիկեանի եթէ սովետահայ բանաստեղծութիւնը ընթանար բնականոն զարգացումով, այսօր երիտասարդա-

19) Ալ. Թօփճեան, Ամէնից Առաջ Փոխըմբռնում, «Սովետ. Գրականութիւն», 1971, քիւ 2 :

20) Նոյնը :

21) Սիւլվա Կապուտիկեան, Ժամանակի Շունչը եւ Ասելիքի Պակասը, «Սովետ. Գրականութիւն», 1971, քիւ 2 :

կան բնաստեղծութեան արդի գրեւածեւը այդքան ալ տարաշխարհիկ պիտի չթուէր :

«Նշիչէ Չարենցին «օրէնքից դուրս» յայտարարելը մի քանի տասնեակ տարի ետ պէտք մեր բանաստեղծութեան զարգացումը, այնտեղ գերիշխողը դարձաւ գեղջկական մտածողութիւնը՝ 19-րդ դարից եկած իր բառ ու բանի զինանոցով, ասելիքի աշուղական ձեւով եւ մակարդակով :» (22)

Մէկ կողմէ կը քննադատէ ժամանակակից մեր բանաստեղծութեան այն թեւը, որ ապաւինելով ընթերցողի զրացական թոյլ երակին «արցունք քամող» ոտանաւորներու «մատչելի ու պարզունակ քարոզչականութեամբ» կը վնասէ բեր բանաստեղծութեան զարգացման, իսկ միւս կողմէ ալ ծայրայեղութիւն կը նկատէ կարգ մը երիտասարդ բանաստեղծներու մօտ «իրար հետ կապ չունեցող բառերու, ածականներու, տողերու» յաճախակի դորձածութիւնը : Առողջ է սակայն Սիրվա Կապուտիկեանի եզրակացութիւնը. «մեր երիտասարդները տարիքային հասունացման հետ միասին՝ հասունով են նաեւ այս ճշմարտութեանը, եւ արդէն սկսել են վրել աւելի պարզ, հասկնալի՝ բարդացումը տանելով ոչ թէ՛ ձեւի, այլ մտքի եւ զգացումի խորութեան ուղղութեամբ :» (23)

Բանաստեղծ Գէորգ Էմին, որ յաճախ հանդէս եկած է բանաստեղծութեան մասին պարզած իր տեսութիւններով, կու տայ իր կարծիքը Հայաստանի երիտասարդական բանաստեղծութեան մասին եւս : (24)

Տարբեր է բոլորովին Գ. Էմինի նորարութեան մասին ըմբռնումը : Իրեն համար ճշմարիտ նորարութիւնը հազուադիւտ իրողութիւն է, որ կապուած է ոչ միայն բնատուր տաղանդի հետ, այլեւ «հասարակական մեծ յեղաբեկումների հետ» : Չափանցնենք, կ'ըսէ, նորարութեան հասկացողութիւնը, ասոր-անոր նորարար սրակումը տալով : Ճշմարիտ նորարութեան օրպէս ներկայացուցիչ ան կը ներկայացնէ Մայակովսկին, որուն նորարութիւնը իր տաղանդին հետ կը յատկանշուի «յեղափոխութեան ալիքով» : (25)

Ուրիշ առարկութիւն մը Գէորգ Էմինի կողմէ երիտասարդական բանաստեղծութիւն բնորոշումին նկատմամբ : «Չկայ երիտա-

22) Նայմը :

23) Նայմը :

24) Տես՝ Գեորգ Էմին, Իմ Դիտողութիւնները, «Սովետ. Գրականութիւն», 1971, Բիւ 2 :

25) Նայմը :

ասարդ բանաստեղծ կամ տարէց բանաստեղծ, այլ եղել է եւ կայ միայն բանաստեղծ եւ ոչ բանաստեղծ» : (26)

Ինք ալ կ'ընդունի երիտասարդ բանաստեղծներու հասցէին ուղղուած այն քննադատութիւնը, որ կը վերաբերի անհասկնալիութեան : Եւ ատիկա արդիւնքն է, կ'ըսէ, երիտասարդ բանաստեղծներու ինքնատպուլթեան մասին ունեցած սխալ ըմբռնումին :

Միջին սերունդի բանաստեղծներէն Պ. Սեւակի կեցուածքը բոլորովին տարբեր է : Հետաքրքրական ըլլալով հանդերձ՝ առաջին տպաւորութեամբ հակասական կեցուածքի մը ընոյթը կը կրէ : Բայց այդպէս չէ : Երիտասարդներուն հրապարակ գալէն առաջ Պ. Սեւակ ինքն էր մեր բանաստեղծութիւնը ականդոյթներէն ձերբազատելու տեսութեան եւ պայքարին առաջնորդը : Եւ խոր ազդեցութիւն ներդրածեց այս ուղղութեամբ : Երիտասարդներէն քանի մը հատը ինք հովանաւորեց : Սակայն, այն օրէն ասդին երբ Հայաստանի երիտասարդ բանաստեղծները խմբական եւ հաւաքական ներկայութիւն զգացուցին իրենց տեսութիւններով եւ ստեղծագործութիւններով, Պ. Սեւակ հանդէս եկաւ «Թժուարը իրենից հասուն լինելն է...» (27) յօդուածով : Պ. Սեւակի այս յօդուածին մէջ յայտնած մտքերը զարմացուց, յատկապէս երիտասարդները, որոնք չբաշտեցան բացայայտելու իրենց զարմանքն ու վրդովումը :

Երիտասարդ քննադատ Ալ. Թօփճեանի հետեւեալ տողերուն մէջ ի յայտ կու գայ այդ զարմանքը. «Ի հարկէ, մինչեւ ջահելներէրի գալը Պ. Սեւակը արդէն շատ բան էր արել մթնոլորտի թարմացման համար : Եւ այսօր զարմանալի է, որ հենց Սեւակն է ակադեմիզմի դիրքերից «մեղադրում» երիտասարդներին» :

Ի՞նչ կ'ըսէ Պ. Սեւակ իր այդ յօդուածին մէջ : Ըստ Պ. Սեւակի Հայաստանի աւագ եւ միջին սերունդի բանաստեղծները իրենց «հիմնական դործը արդէն արել» են, իր յոյսը կը կազմէ այսօրուան կրտսեր սերունդը : Երիտասարդ սերունդի մօտ դրական երեւոյթ կը համարէ՝ անոր բերած թարմութիւնը : Թարմութիւն սակայն, եւ ոչ թէ նորութիւն, որովհետեւ ըստ Պ. Սեւակի «Լուսնի տակ ոչինչ նոր չէ» : Երիտասարդ սերունդի երկրորդ յաղթանակը կը նկատէ անոնց ձերբազատումը «սովորոյթի ուժէն» : Այն ինքնալստահութիւնը, զոր կը զգացնեն երիտասարդները Պ. Սեւակ կը գտնէ բնական : Սակայն մեղադրելի են, կ'ըսէ, իրենց բացայայտած մեծամտութեամբ : Պ. Սեւակի այս մեղադրական շեշտ

26) Նոյնը :

27) Տես՝ «Սովետ. Գրականութիւն», 1970, քիւ 5 :

կրող տողերուն ետին, դժուար չէ հաստատել սակայն հովանաւորի եւ քաջալերողի սէր ու դուրդուրանք՝ երիտասարդները գրական ճիշդ ուղղութեան վրայ տեսնելու ցանկութեամբ: Թեւադրիչ են իր պարզած մտահոգութիւնները, որոնք կը վերաբերին երիտասարդները իրենց մեծամտութենէն դուրս բերելու եւ անդրադարձընելու. «Ոչ թէ իր ունեցածով հիանալու, այլ իր չունեցածի վրայ խորհելու համար» (28)

Պ. Սեւակի քննադատութեան թիրախն է նաեւ այն՝ որ երիտասարդ բանաստեղծներու մշակած գրականութեան մէջ կը պակասի «ասելիքը», առաջնորդելով դանոնք «պղտորութեան»: Մէջբերած հետեւեալ տողերը կը բացատրեն իր բուն ըսելիքը. «Ասելիքի պակասից է ծագում այն, որ մեր երիտասարդական արձակը շատ է բանաստեղծական: Ասելիքի պակասից է բխում եւ այն, որ մեր երիտասարդական բանաստեղծութիւնը շատ է արձակունակ»: Եւ ըստ իրեն արձակունակ ըլլալու հանդամանքը կու գայ անկէ որ «երիտասարդութեան մեծամասնութիւնը գրում է ոչ միայն առանց յանդի, այլ նաեւ առանց կշռոյթի եւ չափի»: Եւ Պ. Սեւակի դատողութեամբ կարելի չէ ըմբռնել «Չափածոն... առանց չափի: Այսինքն՝ նկար... առանց դոյնի, երգ... առանց ձայնի»: Եւ այստեղ կը հիմնաւորէ այն տեսակէտը թէ չկայ արուեստ՝ առանց արհեստի: Եւ երիտասարդներուն կը պակասի, կ'ըսէ, բանաստեղծական արուեստի արհեստի փորձառութիւնը, որ կը մղէ գիրենք դիւրին կերպով բանաստեղծութիւն գրելու փորձութեան: (29)

Անդրադառնալով սովորոյթի ուժի եւ աւանդոյթի ուժի հարցերուն, Պ. Սեւակ կու տայ հետեւեալ պատկերաւոր բնորոշումը. «Ճիշդ է, որ երեխայի ծնունդն սկսում է այն պահից, երբ կտրուում է նրա պորտը մօրից: Նոյնքան էլ ճիշդ է, որ երեխան սկսում է մարդ դառնալ այն պահից, երբ այս անգամ էլ նրան կտրում են մօր ծծից: Այսպէս է նաեւ արուեստի բնադաւառում: Բայց մօր պորտից, ապա նաեւ ծծից կտրուելով՝ զաւակն իր ծնողից օտարւում է միայն առ երեւոյթ: Չաւակն իր ծնողին ցմահ կապուած է մնում նմանութիւնների այն անկտրելի ցանցով, որ կոչւում է ժառանգութիւն: Եւ ժառանգականութեան այս օրէնքը արուեստի մէջ գործում է ոչ պակաս ուժղնութեամբ, քան կեանքի մէջ: Եւ կոչւում է ոչ այլ կերպ, քան աւանդոյթ: Ուստի եւ ժխտել

28) Նայճը:

29) Նայճը:

աւանդոյթը նոյնն է, ինչ ժառանգականութեան ժխտումը, որ միայն յիմարութիւն չէ, այլեւ խելագարութիւն:» (30)

Երիտասարդ բանաստեղծներու լեզուաոճային աղքատութիւնն ալ մեղադրելէ ետք Պ. Սեւակ կ'անցնի անոնց բանաստեղծութիւններու խորքի քննարկման: Ըստ իրեն «երիտասարդներից շատերի շատ ու շատ «բանաստեղծութիւններ»ը կարելի է կարգաւ վերջից դէպի սկիզբը»: Որտ քննարկման ենթարկելով խորքի հարցերը կը դտնէ որ Երիտասարդական բանաստեղծութեան մէջ կը պահսի օրկանական կառոյցը: Եւ իր դատումի եզրակացութեան մէջ Պ. Սեւակ կը թելադրէ որ «բանաստեղծը ունենայ իր կնիքը, որ դրոշմուած է իր իսկ մատանու վրայ, մի կնիք, որ մէկ ուրիշ մատանու վրայ չկայ, եւ մի մատանի, որ մէկ ուրիշի մատին չի դալու:» (31)

Որտ են Պ. Սեւակի դատումները Հայաստանի երիտասարդական բանաստեղծութեան մասին: Այդ խոտապահանջութիւնը մեկնակէտ ունենալը կը զգացնէ սակայն որ ան հայ նորադոյն բանաստեղծութիւնը կ'ուզէ տեսնել համապատասխան մակարդակի մը բարձրութեան վրայ: Ծիշդ այս կէտին համար ալ հակասական թուեցան Պ. Սեւակի մէկ կողմէ երիտասարդները քաջալերելու եւ հովանաւորելու ազնիւ տրամադրութիւնները, եւ միւս կողմէ «բանաձեւած այսքան խիստ մեղադրանքները երիտասարդական բանաստեղծութեան հասցէին:»

«ԳԱՐՈՒՆ» ԱՄՍԱԳԻՐԸ ԵՒ ԳԱՐՈՒՆԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ

«Գարուն» ամսագիրը իր հրատարակութեան առաջին օրէն իր էջերուն մէջ հիւրընկալելով հովանաւորեց եւ քաջալերեց երիտասարդ բանաստեղծներու սերունդը: Երիտասարդական այս հանդէսին ղլխաւոր խմբադիրը՝ տաղանդաւոր արձակագիր Վարդէս Պետրոսեան եւ ամսագրի բանաստեղծութեան բաժնի վարիչ՝ Ալեքսանդր Թօփճեան նշանակալից դեր ունեցան երիտասարդ բանաստեղծներուն ասպարէզ դալուն, անոնց ընծայուած ուղադրութեան եւ նոյնիսկ կազմաւորման մէջ: «Գարուն»ը եւ անոր խմբադիրը արդարացուցին երիտասարդական հանդէսէ մը ակնկալուած դերը: Հայաստանի երիտասարդ բանաստեղծները ունեցան իրենց ոչ

30) նոյնը:

31) նոյնը:

միայն բեմը՝ այլև զիրենք քաջալերող եւ հովանաւորող հրատարակութիւնը: Կարելի չէ այս առիթով չխշատակել երիտասարդութեան ուրիշ մէկ օրկանին՝ «Աւանկարտ» թերթի տրամադրած սիւնակները երիտասարդ բանաստեղծներուն:

Այս երկու երիտասարդական օրկաններու մէջ առաւելաբար իրենց ստեղծագործութիւններով հանդէս գալէ, գրողներու եւ գրասէր հասարակութեան ուշադրութիւնը գրաւելէ ետք է որ գրական միւս օրկանները եւս՝ «Գրական թերթ», «Սովետական Գրականութիւն», սկսան տեղ տալ երիտասարդ բանաստեղծներուն: Եւ ուշագրաւ էր այս առիթով հաստատել այն գնահատելի ոգին, որ վեհանձնօրէն ցոյց տուին աւաղ եւ միջին սերունդի բանաստեղծները՝ իւրաքանչիւրը ստանձնելով երիտասարդի մը հովանաւորութիւնը եւ ողջոյնի դրուատական խօսքերով հանդէս գալը գրական մամուլի մէջ:

«Գարուն» ամսագրի բանաստեղծութեան սիւնակներուն աշխատակցող երիտասարդ բանաստեղծներու ստեղծագործութիւններով նոր շունչ, եւ թարմութիւն ներարկուեցաւ արդէ մեր դասական աւանդներով մշակուող բանաստեղծութեան: Հետզհետէ երիտասարդներու ծաւալած յառաջապահ բանաստեղծութեան ճըղատումները աղմուկ յառաջացուցին շարժումին եւ անոր արդիաշունչ ձգտումներուն շուրջ: Պ. Սեւակի բառերով «միայնգամից» յեղաշրջուեցան բանաստեղծութեան դասական եւ աւանդական ըմբռնումները: Հայաստանի երիտասարդ բանաստեղծներու մշակած, փորձած բանաստեղծութիւններով՝ բանաստեղծութեան աւանդական ձեւը հազաւ նոր տարազ եւ խորքը ընթացաւ նոր ուղղութեամբ: Այսինքն՝ Հայաստանի երիտասարդ բանաստեղծները սկսան գրել այնպէս՝ ինչպէս ժամանակակից բանաստեղծութեան հրամայականն ու պահանջն էր: Դասական թեմաները մէկդի հրուեցան, հին սէրերը մոռցուեցան եւ հնամաշ ապրումներուն հրաժեշտ տրուեցաւ: Ժամանակակից մարդը իր դարու համապատասխան բարդ ներաշխարհով եւ մտորումներով, դարը իր բազմաձայն եւ բազմաբարդ խնդիրներով դարձան առանցքը եւ սեւեռակէտը Հայաստանի երիտասարդ բանաստեղծներուն: Բնական էր նաեւ այն հակադրեցութիւնը որ ցոյց տրուեցաւ: Այսօր, սակայն, իրականութիւն է Հայաստանի երիտասարդ բանաստեղծներու տիրական ներկայութիւնը մեր գրական աշխարհին մէջ:

«Գարուն» ամսագրի հրատարակութենէն անդին, անոր էջերուն մէջ տեղ դտած բազմաթիւ բանաստեղծներէն կը զատորոշուին տասնեակ մը անուններ, որոնք արդէն խօսիլ կու տան իրենց մա-

սին: Քիչ է ըսել խօսիլ կու տան: Անոնք դարձած են ուշադրութեան առարկան Հայաստանի մտաւորականութեան եւ ժողովուրդին: Խոստումի եւ ակնկալութիւններու սահմանը անցնելով՝ իրենց բանաստեղծական անհատականութիւնը եւ դիմագիծը կազմելու ճանապարհին են անոնք: Անոնցմէ յիշենք Յովհաննէս Գրիգորեանը, Դաւիթ Յովհաննէսը, Սլաւիկ Զիրոյեանը, Հենրիկ Էդոյեանը, Արտեմ Յարութիւնեանը, Արտակ Ոսկանեանը, Եուրի Սահակեանը, Կարօ Մելիքսեթեանը, Զուլիէտ Գրիգորեանը, Գազիկ Դաթեանը, Անահիտ Պարսամեանը: Այս անուններուն հետ անպայման պէտք է յիշուէին Ռազմիկ Դաւոյեանն ու Արեւշատ Աւագեանը: Այն հանդամանքը սակայն, որ երկուքն ալ հանդէս եկած են բանաստեղծական հատորներով եւ կազմած իրենց բանաստեղծի դէմքը՝ կը թելադրեն մեզի առանձինն անդրադառնալ իրենց մասին:

Վերեւ յիշուած դէմքերէն ոեւէ մէկը՝ բացի Ռազմիկ Դաւոյեանէն եւ Արեւշատ Աւագեանէն տակաւին հատորով հանդէս չեն եկած: Իրենց բանաստեղծութիւնները կը մնան խորհրդահայ դրական մամուլին մէջ: Առաջին հաստատումը զոր կ'ուզենք ընել երիտասարդ բանաստեղծներու այս խումբին մասին՝ հետեւեալն է: Առանց առանձին հատորներու հեղինակ դառնալու, մամուլին մէջ տպուած բանաստեղծութիւններով յաջողեցան այսքան ազմուկ յառաջացնել եւ հանրային կարծիքին առջեւ թեր ու դէմ տեսակէտ ստեղծել: «Առաջին Գիրք» մատենաշարին մէջ կրնային ներդրուել նաեւ այս խումբի երիտասարդ բանաստեղծները: Նպատակաւորման ալ ա՛յդ պիտի ըլլար անկասկած: Եթէ պահ մը ընդունինք, որ այս երիտասարդներուն՝ իրենց սեփական ստեղծագործութիւններու հանդէպ ծայրայեղ աստիճանի հասնող խոտապահանջութիւնն էր գլխաւոր պատճառը «Առաջին Գիրք» մատենաշարով լոյս չտեսնելուն՝ նուազ դեր չկատարեց նաեւ այն վերապահութիւնը, որ առաջին օրերուն ցոյց տրուեցաւ անոնց ստեղծագործական աշխարհայեացքին եւ գրելակերպին նկատմամբ:

Երկու խօսք «Առաջին Գիրք» մատենաշարի մասին: Այս մատենաշարով լոյս տեսած բանաստեղծական անդրանիկ ժողովածուներու շարքէն իրենց ինքնութեամբ եւ խոստումի դրաւականով կը գատորոշուին հետեւեալները. Զաւէն Կասեան՝ «Ժամանակն Իմ Զայնով», 1969, Ս. Աթոյեան՝ «Իմ Զայնը», 1969, Եուրի Սահակեան՝ «Արեւը Քո Դէմքին», 1966, Սոնա Յակոբեան՝ «Արթնացում», 1969, Երուանդ Պետրոսեան՝ «Պատուհան», 1968, Արտակ Ոսկանեան՝ «Կաթն-Միր», 1967, Թ. Բոլորչեան՝ «Արեւի Մտերմութիւն», 1965: Այս շարքին մէջ սակայն կան վրիպածներ, որոնք

զարմանալիօրէն Հայաստան հրատարակչութեան ուշադրութեան արժանանալով տպադրութեան յանձնուած են: Շատ դիւրութեամբ եւ արժանաւորապէս «Առաջին Գիրք» մատենաշարով կրնային լոյս տեսնել «Գարուն» ամսագրի երիտասարդ բանաստեղծներու գործերը:

«Առաջին Գիրք» մատենաշարի խմբագրութեան մեկնակէտը՝ հրատարակութեան յանձնելով վերեւ յիշուած հատորները, եղած են դասական ըմբռնումները: «Գարունական»ները համարուած են քիչ մը շատ յեղափոխական իրենց արուեստի արտայայտութեան եւ ըմբռնումներուն մէջ: Այս պատճառով ալ ներհակ ու անհաշտ «Առաջին Գիրք» մատենաշարի ըմբռնումներուն: Յամենայնդէպս, այդ մատենաշարով լոյս տեսած առաջին գիրքերուն մէջ, արժէքաւորները եւ խոստումնալիցները կան բարբախտաբար: Անոնց բանաստեղծութեան ակունքները մեր դասական աւանդները ըլլալով հանդերձ՝ կը պահպանեն սեփական ձայնի դրոշմը եւ բանաստեղծական արուեստի ինքնութիւնը իրենց առաջին հատորներով: Մեր վաղուան բանաստեղծութիւնը կրնայ յոյսեր կապել Շուրի Սահակեաններու, Արտակ Ոսկանեաններու եւ Սոնա Յակոբեաններու:

Ընդգծելի արժանիքը երեքի պարագային կը մնայ պատկերաւոր մտածողութիւնը, բանաստեղծական արուեստի խտութիւնը եւ ջնարականութիւնը:

Պատկերաւոր մտածողութեան որպէս նմոյշ կը մէջբերենք Արտակ Դարբինեանի «Կաթն-Միր» գրքոյքէն՝ «Մեր Դարը, Մենք եւ Մեր Ժամացոյցները» քերթուածէն հատուած մը.

Ափարականչից առաջ գարթնելու համար
Մենք հնարեցինք մեր ժամացոյցները:
Ու ժամանակը պահ տուինք նրանց:
Յետոյ տիեզերքի կործանման ֆայլերգը
դրինք

Նրանց տկտկոցի մէջ,
Որ ամէն վայրկեան յիշեմք ժամանակաւոր
յախտեմութիւնը:

Մենք ժամանակն արինք կտար-կտար,
Մաս-մաս արինք,
Դարձրինք ժամ, բոպէ
վայրկեաններ դարձրինք

Ու վայրկեանի հազարերորդ մաս:
Եւ հիմա մենք երբեմն մոռանում ենք

տարիների մասին,
 Որ հնարել եմ մեր նախնիները:

Կը մէջըրերնը նաեւ ետրի Սահակեանի «Արեւը Քո Դէմքին»
 գրքոյքէն «Իմ Դիմանկարը» բանաստեղծութենէն հատուած մը,
 ուր ակներև է բանաստեղծական արուեստի խառութիւնը:

Նկարեցէ՛ք ինձ ահա այսպէս
 երիտասարդ,
 Միջակից բարձր հասակով,
 20-րդ դարի ֆոնի վրայ,
 Աչքերում վիշտը 41 թուի
 Եւ հրնուամփը տիեզերական վազուայ:
 Ես այն սերունդն եմ,
 Քում հայրերը չծերացան
 Տանը, առօրեայ հոգսերի մէջ:
 Ես այն սերունդն եմ,
 ով բուրբ գրքերը կարդաց
 Պատերազմի մասին,
 Հայրերին գտնելու յոյսով
 Ու հասկացաւ, որ գրքերը յօրինուած են:
 Հարկաւոր էր նրանց փնտռել կեանքում:
 Ու գնաց հայրերի հետքերով...

Հայաստանի երիտասարդական բանաստեղծութեան յառա-
 ջապահ սերունդը պարունականներն են, որոնց անունները յիշուե-
 ցան արդէն: Դժգոհները եւ դժգոհեցնողները: Բանաստեղծներու
 յառաջապահ այս սերունդի մասին յայտնուած թեր ու դէմ կար-
 ծիքներուն մէջ ճշմարտութիւններ հարկաւ թէ կան:

Մեզի համար առաջին ուշագրաւ եւ ընդգծելի իրողութիւնը
 կը մնայ ձեւի եւ խորքի անոնց յանդուզն խիզախումը: Հին եղանակ-
 ներէն հրաժարելու եւ արդի ժամանակներու համապատասխան
 նոր եղանակով, բոլորովին նոր ձեւով նուազելու արժանիքը կը
 գումարուի յառաջապահ այս սերունդի հաւաքական յատկանիշնե-
 րուն վրայ: Մեզ կ'ուրախացնէ իրենց մէջ սաղմնաւորուող եւ
 քերթուածներով դրսևւորուող նոր աշխարհազգացողութիւնը:
 Յատկապէս Յովհաննէս Գրիգորեանի քիչ բառերով եւ խօսակցա-
 կան լեզուի պարզութեան հասնող գրելակերպը, որ հրաժարումն է
 գեղեցկախօսութենէն, մեր բանաստեղծութեան առջև կը բանայ
 նոր ուղիներ: Փախարբրութիւններու հարուստ մթերքով եւ պատ-

կերաւոր մտածողութեան բարիքներով իրենց բանաստեղծութիւնները օժտելու ստեղծագործ կարողութիւնը կը ձերբազատէ մեր բանաստեղծութիւնը պատմողական հեշտաբանութենէն: 20-րդ դարու բանաստեղծական արուեստին յատուկ իմացապաշտ խորքին թափանցումը Հայաստանի երիտասարդ յառաջապահներու ստեղծագործութեան մէջ, մեր բանաստեղծութիւնը քայլ մը եւս կը մօտեցնէ Համաշխարհային բանաստեղծութեան մակարդակին, զոր է յայտ կու գայ մասնաւորաբար Դաւիթ Յովհաննէսի, Հենրիկ Էդոյանի, Սլավիկ Չիլոյանի բանաստեղծութիւններուն մէջ:

Յառաջապահ բանաստեղծներու այս սերունդը իր մտաւոր զարգացումով եւ մշակոյթով, իր հոգեկան ընդգրկումներով ժըլտտումն է ցարդ ընդունուած բանաստեղծութեան զգացական դիւրին եւ քիչ մըն ալ հեշտ քնարականութեամբ օժուռ ոճին:

Արարատ, Մասիս, Սեւան եւն. իրենց Համար եւս նուիրական ազգային սրբութիւններ մնալով հանդերձ՝ կը գրեն ու կը ստեղծագործեն մարդուն Համար, 20-րդ դարու ուիթմով սնող եւ ապրող մարդուն Համար: Եւ ասիկա ներգործութիւնն է իրենց արուեստին վրայ այն ազդեցութեան, որ կու գայ օտար եւ ժամանակակից Համաշխարհային բանաստեղծութեան հետ Հաստատած խորունկ ծանօթութեամբ եւ կապով:

Այդ ազդեցութիւնները յաճախ կապկումներու մեղքը կը կրեն, ճիշդ է: Միքի, բառերու փոխարեքական արժէքին տրուած կարեւորութիւնը (քիչ մը շատ) կը դժուարացնեն ընթերցողին բանաստեղծութեան մթնոլորտին մէջ մտնելու եւ զայն ըմբռնելու ընկալչութիւնը: Յանուն ինքնատպուլթեան եւ ինքնուրոյն մտածողութեան շինուած պատկերներն ու գիւտերը Հազորդականութեան բարիքէն կը զրկեն բանաստեղծութիւնը եւ արտասովոր երեւալու մարմաջը կը զգացնեն անտեղի կերպով:

Անյանդ գրելը մեղք մը եւ թերութիւն մը չհամարելով հանդերձ՝ քերթուածը ներքին կշռոյթէն զրկելու աստիճան արձակուանակութեան երթալը կը մեղանչէ բանաստեղծութեան ոգիին:

Անհասկնալիութիւնը նպատակ դարձնելը արուեստականութեան կ'առաջնորդէ: Սակայն եթէ մեր բարդ դարի արտայայտութիւնը եղող մարդուն բարդ ներաշխարհն է որ կը մղէ ընական ճամբով եւ արեան խլրտումով բարդ արտայայտչամիջոցներու՝ ատիկա խրթնաբանութիւն պէտք չէ համարուի, այլ ընական տաբերքը բանաստեղծի բարդ ներաշխարհին:

Կէտադրութեամբ գրելը կամ չգրելը աւելորդ մանրամասնութիւններ են, որոնք բանաստեղծութեան արժէքէն, որակէն եւ

հմայքէն ոչ մէկ բան կը նուազեցնեն: Կարելորդ այն է որ բանաստեղծութիւնը՝ բանաստեղծութիւն ըլլայ: Եւ այս երիտասարդ տղաքը՝ Դաւիթ Յովհաննէսն ու Հենրիկ Էդոյեանը, Յովհաննէս Գրիգորեանն ու Սլաւիկ Զիւրոյեանը գիտեն 20-րդ դարու համապատասխան արուեստով բանաստեղծութիւն գրել:

Արձակադիր Սերո Սանգազեան իր «Զրոյց մերոնց հետ» յօդուածին մէջ այսպէս կ'արտայայտուի երիտասարդ բանաստեղծներու այս սերունդի մասին. «Այս սերունդը իր նախորդ սերունդներէց բախտաւոր է ոչ թէ նրանով (ինչպէս պնդում են ոմանք աւագներէց), որ հացի հոգս չունեն եւ կարող են մի օրում ծանօթանալ ասանք, եւրոպական մի երկրի ժամանակակից պոեզիային: Ոչ բախտաւոր են, որովհետեւ նոր սերունդը աւելի նուրբ ու ճիշդ, նաեւ էական ու մօտ է զգում ժամանակակից աշխարհի ոգին: Երիտասարդ բանաստեղծները մերժում են մակերեսը եւ խոր հետաքրքրութիւն ունեն խորքը տեսնելու, կեանքի ստուերները նեղացնելու, եւ ապա լուսաւորելու առաքելութեան մէջ: Նրանք խառնուած են մեր յիսնամեայ նորոգ կեանքին, ինչպէս սերմը՝ հողին: Նրանք իրաւունք ունեն երես չբջիւղ անսիրտ աստուածներէց ու, մանաւանդ, նոր որակ ու ձեւ ստացած աւետարանական քարոզչութեան թմբիկից:

«...Առողջ, նոր, ազգային, նաեւ բանաստեղծական է բանաստեղծների մեր երիտասարդ սերունդը:» (32)

Կ'արժէ քիչ մը կանգ առնել այս անուններուն դիմաց: Դաւիթ Յովհաննէսը՝ 26 տարեկան է տակաւին, երբ այսքան շատ խօսիլ կու տայ իր մասին: Անհանդարտ խառնուածքով այս երիտասարդ քերթողը, որդին է բանաստեղծ Հրաչեայ Յովհաննէսեանի: Համալսարանական ուսումով՝ այժմ դասախօս է Կիրովականի մանկավարժական ինստիտուտին մէջ: Դաւիթ Յովհաննէս ստեղծագործական աշխատանքին առնթեր կը կատարէ թարգմանական աշխատանք: Իր հետաքրքրութիւններուն մօտ են անգլիական եւ ամերիկեան ժամանակակից բանաստեղծները, որոնցմէ՝ Ալէն Գինսբերգէն, Կրեկորի Քորդոյէն, Թովմաս Թայլընէն եւ Էլիօթէն թարգմանութիւններ կատարած է: Առանց հատոր ունենալու, արդէն ուժեղ կերպով զգացուցած է իր բանաստեղծի անհատականութիւնը: «Թողութիւն» բանաստեղծութեան մէջ, Դաւիթ Յովհաննէս կը յայտնաբերէ Նայիրի Զարեանի բառերով՝ «Կեանքը նոր աչքերով տեսնելու եւ նոր ոճով արտայայտելու ձգտումը»:

Մայրամուտներն ու արեւածագերն իրարից բաժանող ժամերի
 յոգնութիւնն ու տագնապը
 իրենց միչերով ու արիւնտ սաւաններով,
 իրենց կեղծ բաժանումներով ու անկեղծ գգուանքներով,
 անվերջ հատնող աննկատ նորից լցուող յայտի ջրհորներով,
 իրենց բոլոր նահանջներով ու անկալուտող
 յարձակումներով,

այն ամէնով, ինչ սկիզբն ու վախճանը նա գիտէ միայն -
 նուիրում եմ քեզ:

Տար այդ ամէնը ուսիդ վրայ, եթէ կարող ես:

Ես արդէն կռացել եմ նրանց ծանրութեան տակ:

Ես զգում եմ ինձ խոստացուած լոյսը:

Ես զգում եմ մարմնիս բոլոր ծալքերով:

Ես պիտի դիմաւորեմ արեւածագը՝ կանգնած ուղիդ,
 ձեռքերս վար:

*Դաւիթ Յովհաննէսին տարեկէց է Յովհաննէս Գրիգորեանը,
 որ արդէն ինքզինք պարտադրած անհատականութիւն է գրական
 երիտասարդ սերունդին մէջ: Երեւանի Պետական Համալսարանի
 Բանասիրական ճիւղէն շրջանաւարտ, ասպարէզով լրագրող է: Ինք
 եւս կը զբաղի Քարդմանական աշխատանքով: Յովհաննէս Գրիգորե-
 անի բանաստեղծութիւնը կը յատկանշուի պարզութեամբ մը, որ
 ինքնատուութեան ուժեղ զրոյժը կը կրէ:*

Լուսամուտի գոգին դրումս եմ
 երկու կապոյտ աչքեր,
 դրանք ինձ նուիրել է գնչուհին,
 նա ինձ խաբեց

Եւ խաբելով ասաց,

որ դրանք երջանկութեան թալիսմաններ են:

Լուսամուտի գոգին դրումս եմ

երկու կապոյտ աչքեր,

եւ ամէն գիշեր քնելուց առաջ

երկար աղօթում եմ,

նրանց առաջ ծունկի իջած:

Գնչուհի

Մի կայր ազջիկ կայ աշխարհում,

նա թափառում է եւ ոչինչ չի տեսնում,

ասա նրան,

որ գայ վերցնի այդ աչքերը

եւ ասա նրան,

որ նա քաճուճ գայ եւ ոտքերի մատների վրայ,
որովհետեւ,
ես, ախր շատ եմ յոգնած,
պէտք էի
պէտք էի
ինձ արթնացնել: (33)

Յովհ. Գրիգորեանի «Յարութիւն» պոեմը, տպուած «Գա-
րուն» ամսագրի 1970 թ.ի 5-րդ համարին մէջ, առաւել եւս կ'ամրա-
պնդէ ընթերցողին հաւատքն ու վստահութիւնը անոր բանաստեղ-
ծական կարելիութիւններուն հանդէպ: Հրատարակութեան համար
ուշացած՝ կազմաւորուած անհատականութեամբ եւ հարուստ
խառնուածքով, սրտամօտ եւ մարդկային բանաստեղծ է Յովհ.
Գրիգորեան: Յովհաննէս Գրիգորեանի եւ իր սերունդի երիտասարդ
բանաստեղծներու նորարութիւնը կը վերաբերի ոչ միայն լեզուա-
ոճային բնագաւառին, այլեւ հայրենիքի հանդէպ արտայայտուած
նոր զգացողութեան: Յովհաննէս Գրիգորեանի «Քո հետ եւ քո
համար» եւ Սամուէլ Կոսեանի «Ինչ հրաշալի է ապրել հայրենիքի
համար» հայրենասիրական քերթուածներուն մէջ ակնբախօրէն կը
զբազուրի այն յատկանիշը թէ հայրենիքի դովերգութիւնը շփոթում է
անցած է մտերիմ խօսակցութեան եւ քաղաքացիական պարտքի
զխտակցութեան:

Երիտասարդ բանաստեղծներու այս սերունդին մէջ յատկա-
նշական երեւոյթ է նաեւ նկատել իգական սեռի ներկայացուցիչ-
ներ, որոնցմէ Ջուլիէտ Գրիգորեանը, որ կը հովանաւորուի բա-
նաստեղծուհի Ս. Կապուտիկեանի կողմէ, արդէն յաջողած է հա-
մարում կազմել տալ իր անուան շուրջ: 35 տարիքին թեւակոխած
այս երիտասարդ քերթողուհին իր Փրանսերէն լեզուի մասնագի-
տութեամբ քայլ կը պահէ արդէ Փրանսական բանաստեղծութեան
չարժումներուն հետ եւ շահեկան թարգմանութիւններ կը կատարէ
Փրանսացի արդէ բանաստեղծներէ: Եւ բնական է նաեւ այն ազդե-
ցութիւնը, որ կը կրէ Փրանսական քերթողութեան: Իւրացուած
ազդեցութիւններ: Քանի ինչ որ կարդացած ենք Ջուլիէտ Գրիգոր-
եանի բանաստեղծութիւններէն համակած է մեզ բանաստեղծի ու-
րոյն աշխարհի ապրումներով: Հատուած մը իր «Վերածնունդ» (34)
խորազրուած քերթուածէն:

33) Տես՝ «Սովիտ. Գրականութիւն», 1969, քիւ 7:

34) Նոյնը:

Մարմինս իսչուեց
 Լերան կատարին:
 Լոյսի մեխերից
 Ափերիս մերմակ
 բաղանդը դողաց:
 Եւ կակաչների
 երփներանգներով
 մերկուեց շուշանէ
 մերմակուքիւնս:
 (Թէ մեռնեմ հիմա
 Չեմ ափսոսալու...)
 Չարչարուած մարմնի
 մասնատումն ինչ է
 հոգու ծննդեան
 յաւերժութեան մօտ:

Բանաստեղծ Վահագն Դաւթեան յոյսեր կը կապէ Անահիտ Պարսամեանի դրական ապագային: Անահիտ Պարսամեանի դրական մամուլին մէջ հրատարակած բանաստեղծութիւնները կը յատկանշուին կանացիական ապրումներու երանդէն ու հողելիճակէն անկախ՝ լեզուա-ոճային թարմութեամբ: Քնարական ըլլալով հանդերձ՝ մտքով կը զգացուին իր բանաստեղծութիւնները:

Մտքի բանաստեղծութեան հաւատացող Հենրիկ Էդոյեանը ուշագրաւ երեւոյթ է Հայաստանի երիտասարդական բանաստեղծութեան մէջ: Գուցէ եւ ամենէն յեղափոխականը իր բանաստեղծական տեսութիւններով եւ ստեղծադրական տարերջով: Բարդ են իր բանաստեղծութիւններու կառոյցը: Մոսկուայի Մաքսիմ Կորջիի անուան համաշխարհային գրականութեան ինստիտուտէն շրջանաւարտ այս երիտասարդ բանաստեղծ մտաւորականը, «մեթաֆորը» վերածելով նպատակի, ըսելիքը կը քողարկէ բառերու եւ ինխարեբութիւններու ուժին ներքեւ: Եւ այս պարագային համոզիչ կը թուի Պ. Սեւակի այն քննադատութիւնը թէ «երիտասարդներէց շատերի շատ ու շատ բանաստեղծութիւնները, կարելի է կարդալ վերջից դէպի սկիզբը»:

Ահա նմոյշ մը իր անվերնագիր մէկ բանաստեղծութենէն.

Հանգչող աստղերը արթնացող աչքեր են,
 Պատուհանի վրայ կախուած վարագոյրը
 իր մէջ նկարել է նոր ծագող արեւի ոսկէ մարմնը:

Ես քայլում եմ դէպի բացուող օրը
 Եւ իմ մէջ տանում եմ
 Բռ Կրագմերի վերջին քարմութիւնը:

Ես այն կը պահպանեմ իմ ձեռքերով մոկած Կրագերի մէջ
 Եւ որպէս հագուագիւտ մի իր
 Ես կը վերադարձնեմ քեզ,
 իմ սէր:
 Դու ոչինչ չես կորցնի արեւի ոսկէ մարմնի պէս: (35)

**ԴԻՄԱԳԻԾ ԿԱԶՄԱԾ ԵՒ ՀԱՏՈՐՈՎ ՀԱՆԴԷՍ ԵԿԱԾ
 ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ՝
 ՌԱԶՄԻԿ ԴԱՒՈՅԵԱՆ, ԱՐԵՒՇԱՏ ԱՒԱԳԵԱՆ**

Հայաստանի երկրասարդական բանաստեղծութեան մէջ արդէն տիրական անուն մըն է Ռազմիկ Դաւոյեան: Իր բանաստեղծական ուրոյն անհատականութիւնը կերտած եւ իր սեփական ճանապարհը հարթելով ինքզինք պարտադրած վաւերական բանաստեղծ մը: Նուիրագործուած է իր տաղանդը ցարդ հրատարակած իր երեք բանաստեղծական հատորներով: Իր առաջին գիրքը՝ «Իմ Աշխարհը», ունեցած է Պ. Սեւակը որպէս խմբագիր, եւ արժանացած Հայաստանի գրական քննադատութեան ջերմ ընդունելութեան, ի մասնաւորի Գուրգէն Մահարիի: Անկէ ետք «Քնարական մատնաշար»ով լոյս տեսած «Ստուերների Միջով»ը արդէն կը յայտնէր թէ հայ ժողովուրդը կ'օժտուի բանաստեղծական ինքնայատուկ կարելիութիւններով յորդուն՝ ինքնատիպ եւ փայլուն տաղանդով մը, որ բանաստեղծի իր խօսքը ունի ըսելիք Հայութեան եւ աշխարհին: Պ. Սեւակէն ետք Ռազմիկ Դաւոյեան առաջինն էր որ ընդունուած եւ սովորական կերպերէն հրաժարելով կը յաջողէր իր բանաստեղծութիւնները օժտել իսկական նորարարութեան թարմութեամբ: Լեզու, պատկեր, փոխաբերութիւն, գիւտ, նորութեան եւ ինքնատուութեան դրոշմը կը կրէին: Եւ Ռազմիկ Դաւոյեան իր բանաստեղծական աշխարհայեացքով եւ դրեյակերպով կը դառնար այն օրինակելի դէմքը, որ սնելով հանդերձ հայ բանաստեղծութեան աւանդներով, իր տաղանդին ճառագայթումով եւ հոգեկան աշխարհին հարստութեամբ, բանաստեղծական ինքնուրոյնութեան կը տիրանար արժանաւորապէս: Եւ հոնկէ նաեւ երէց, միջին թէ երկրասարդ բանաստեղծներու մօտ վայելած յարգանքն ու համա-

րումը: Ռազմիկ Դաւոյեան իր առաջին դիրքի հրատարակութենէն անմիջապէս ետք՝ թարգմանուեցաւ ռուսերէնի եւ ռուս ընթերցողն ու ռուս քննադատական միտքը զնահատանքով արտայայտուեցան իր մասին: Ռուս քննադատ Ալեքսանդր Դիմշից «Սոստում» խորագրուած իր յօդուածին մէջ այսպէս կը բնութագրէ Ռազմիկ Դաւոյեանի արժէքը եւ տեղը. «Դաւոյեանը պայքարի բանաստեղծ է, պրպտուն մտքի բանաստեղծ, որ երբեք չի հանգստանում ձեռք բերածով: Միայն կենսական փորձը, միայն մտքի անկանգ աշխատանքն է արուեստագէտի առջիւ բացում պոեզիայի արշաւոյսը: Սա լաւ, մարտական, ստեղծադրժական էսթէտիկա է եւ ուրախալի է նկատել, որ հենց այդ էսթէտիկան է դրուած բանաստեղծի առաջին դիրքի հիմքում: Ռ. Դաւոյեանը ամուր կապուած է Հայկ. բանաստեղծական մշակոյթին: Դժուար չէ նրա բանաստեղծութիւններում որսալ անվիճ պոեզիայի ցուքերը, որոնք այնքան յատուկ են Ա. Իսահակեանին եւ հայ տաղանդաւոր շատ գրողների: Դժուար չէ նրա պատկերաւոր արտայայտչականութեան մէջ զղալ Ե. Չարենցի էքսպրեսիւ պոեզիայի հնչիւնները: Դրա հետ մէկտեղ, Ռազմիկ Դաւոյեանին հոգեհարազատ են բազմաթիւ այլ ժողովուրդներէ շատ ու շատ արուեստագէտներ՝ բանաստեղծի որոնող սրտի յաւիտենական ուղեկիցներ: Ես արդէն յիշեցի Մայակովսկին: Ինքը՝ Դաւոյեանը եւս քիչ անուններ չի յիշատակում իր բանաստեղծութիւնների մէջ: Այդտեղ մենք տեսնում ենք եւ Նարեկացուն, Լիպոյին, Ե՛ւ Հայնէին, Ե՛ւ Վահներին ու Կոմիտասին Ե՛ւ Ֆրանսայի հիւնայի նկարիչ Մարքէին: Կարծում եմ մեր ժամանակակից բանաստեղծներից Ռ.: Դաւոյեանին առաւել մօտ են կանչած, նրան առաւել հոգեհարազատ են յանդուզն էտուարտաս Մեծելայտիսը եւ Անտրէյ Վոզնեսենսկին»:

Ռուս քննադատին զնահատութիւնն ու դատումը Ռ. Դաւոյեանի առաջին դիրքին առիթով է: Անկէ ասդին լուրջ դրական ճանապարհ կտրած է ան: «Ստուերների միջով»ով արդէն իր ինքնութիւնը դատձ բանաստեղծ է, իսկ «Ռիքվիէմ»ը կը համարուի վերջին տասնամեակի Հայաստանի բանաստեղծութեան ցայտուն նուաճումներէն:

Արեւշատ Աւագեան իր «Օրերի Յայտնութիւնը» քերթուածներու հատորով դարձաւ ուշադրաւ ներկայութիւն մը Հայաստանի երիտասարդական բանաստեղծութեան մէջ: Գիրքը լոյս տեսաւ 1968 թ.ին: Անկէ ի վեր իր բանաստեղծութիւններով աշխատակցութիւն կը բերէ «Գարուն» երիտասարդական հանդէսին եւ «Սովետական Գրականութիւն» ամսագրին: Նորարար բանաստեղծ է,

ուչ ձեւապաշտութեան սիրոյն: Իր «Օրերի Յայտնութիւնը» հատորին առաջին քերթուածին հետեւեալ քառուկով կը բնորոշէ իր արուեստի ըմբռնումը.

Ես նաեւ ասում եմ
 Բառեր կան, որ շատ եմ յոգնել,
 Եւ իմ երգերը վարդի քերթեր չեն,
 Որ քափուում եմ սոխակների գերեզմաններին:

Հատորը բովանդակող քերթուածները հաւատարիմ են այս քառուկով արտայայտուող ոգիին եւ արուեստի հանդանակին: Ժամանակակից մարդու, եւ յատկապէս երիտասարդական ապրումներու խռովքը կայ Ա. Աւագեանի քերթուածներուն մէջ: Դասական թեմաներ մի փնտռէք հոն: Իր բառերով՝ «յոզնած բառերու» փոխարէն կայ որոնում արտայայտչական նոր կերպերու: Եթէ ոչ միշտ, սակայն իր որոշ քերթուածներուն մէջ Ա. Աւագեան կը հասնի ժամանակակից մարդու ապրումները ինքնատիպ պատկերներով եւ ոճով ձեւակերպելու արուեստի ուժին:

Սորհրդահայ բանաստեղծութիւնը իր երիտասարդ բանաստեղծներու սերունդով եւ յատկապէս անոր տաղանդաւոր ներկայացուցիչներով կը նշէ փոխանցման նոր հանդրուան մը: Լաւատեսութեամբ կարելի է նայիլ Հայաստանի վաղուան բանաստեղծութեան: Ռազմիկ Դաւոյեանները, Ա. Աւագեանները, Յովհ. Գրիգորեանները, Դաւիթ Յովհաննէսները եկած են փոխարինելու իրենց նախորդ սերունդները:

ARMENIA'S YOUNG GENERATION OF POETS

BEBE SIMONIAN

In the last decade a generation of young poets has made its presence felt in the literary life of Armenia. The works of these poets have given rise to a deal of criticism. In this study the author presents the opinions of the critics as well as those of the poets, who belong to two generations. In his conclusion, the author concedes that in spite of some defects in the poetry of the younger generation, there is a new depth of spirit and form, proper to the 20th century.

Finally, the author presents two young talented poets, namely Razmig Tavoyan and Arevshad Avakian.

